Azg
Ազգ
30 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ՈՒՐԲԱԹ 221 (3873)

Մոսկվայում սպանվել է գործարար Օլեգ Խաչատուրովը

Մոսկվայի հարավ-արեւմուտքում չորեքշաբթի ուշ երեկոյան սպանվել է քաղաքի նորաձեւության տներից մեկի գլխավոր տնօրեն Օլեգ Խաչատուրովը: Ինտերֆաքս գործակալության տվյալներով, անհայտ անձը Վինոկուրովի փողոցի թիվ 22 տան մոտ հրազենից հինգ գնդակ է արձակել գործարարի կրծքին, որը տեղում մահացել է:

Հանցագործության փաստի կապակցությամբ քրեական գործ է հարուցվել ՌԴ ՔՕ 105-րդ («սպանություն») հոդվածով:

ՌԻԱ գործակալության աղբյուրների տվյալներով, Օլեգ Խաչատուրովը ղեկավարում էր մորթեղենի կարի արհեստանոցներից մեկը: Քննության գլխավոր վարկածի համաձայն, սպանությունը պատվիրված է եւ կապված է նրա առեւտրային գործունեության հետ:

ԵԱՀԿ ՄԽ համանախագահները «թարմացնում են» սեղանին եղած փաստաթուղթը

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մադրիդ

ԵԱՀԿ երկրների ԱԳ նախարարական խորհրդի մեկնարկին նախորդած օրը՝ նոյեմբերի 28-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի (ՄԽ) համանախագահների հետ Մադրիդում Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների համատեղ ճաշին ներկայացվել են նախարարական խորհրդին, ընդունելիք դեկլարացիայում հակամարտությունների կարգավորման ներկա վիճակին առնչվող դրույթներին, ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում դեռեւս չհամաձայնեցված հարցեր:

Մամեդյարովը ձայնակցում է Ադրբեջանի պաշտպանության նախարարի ռազմի «փողին»

Երեկ ԵԱՀԿ ՄԽ, Հայաստանի եւ Ադրբեջանի, նաեւ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի ԱԳ նախարարների, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի եւ ԱՄՆ պետքարտուղարի օգնականի մասնակցությամբ հանդիպումից հետո **Էլմար Մամեդյարովը** հայտարարեց, որ տեղի է ունեցել արդեն երեքուկես տարի քննարկվող հիմնարար սկզբունքների ֆորմալացում: Ըստ Մամեդյարովի, ՄԽ-ն ներկայացրել է քննարկված գաղափարի փաստաթուղթը: Ընդ որում, «այդ քննարկված գաղափարների մի մասն արդեն համաձայնեցված է ու կարելի է ընդունել, եւ արդեն բազմիցս ասվել է, որ սկզբունքների մի մասն էլ համաձայնեցված չէ: Կան մի քանի սկզբունքային հարցեր, որոնցում մենք պետք է շփման կետ գտնենք»:

«Ազգի» հարցին, թե քանիսն են դրանք, Մամեդյարովը պատասխանեց, թե ադրբեջանական մոտեցմամբ, «երկու սկզբունքային հարցեր, ես կասեի՝ անգամ մեկ»: **«Ազգի»** հարցին, թե արդյոք խոսքը Ղարաբաղի կարգավիճակի՞ն է վերաբերում, Մամեդյարովը պատասխանեց. «Որպեսզի դրա իմանաք, ասեմ, որ Ղարաբաղի կարգավիճակի հարցը որպես այդպիսին չի քննարկվում: Պետք է լուծում գտնենք ու բանակցային սեղանը մաքրենք խնդիրներից, որոնք խանգարում են մոտենալ լուծմանը: Դա առաջին հերթին հողերի օկուպացիան է, տեղահանվածներ, հաղորդակցության, անվտանգության խնդիրներ եւ այլն»:

Իսկ ընդհանուր առմամբ, ղարաբաղյան խնդրին Ադրբեջանի դիրքորոշումները մնացել են «մոտավորապես այնպիսին, ինչպիսին եղել են, որ Ղարաբաղի բնակչությունը Ադրբեջանի քաղաքացիներ են, Ադրբեջանի մաս, մինչեւ 1988 թվականը Ղարաբաղում ապրած Ադրբեջանի ադրբեջանական ծագմամբ քաղաքացիները պետք է վերադառնան, առանց որոնց կարգավիճակի հարցի լուծումը միջազգային իրավունքի տեսանկյունից անհնար է»:

Ադրբեջանի պաշտպանության նախարարի՝ պատերազմը վերսկսելու վերջին հայտարարության առնչությամբ Մամեդյարովը նշեց. «Պաշտպանության նախարարը դրա համար էլ պաշտպանության նախարար է, որ նման հայտարարություն է արել, քանի որ նա պատասխանատու է նաեւ օկուպացված տարածքների համար: Ես կարծում եմ, որ քանի դեռ շարունակվում է առկա վիճակը, դա ֆոն է ստեղծում, երբ հայտնվում են եւ, բնականաբար, կան մարդիկ, որ հայտարարում են, թե եթե չենք կարողանում համաձայնել խաղաղ ճանապարհով օկուպացված տարածքներն ազատելու համար, ուրեմն պետք է լուծել ռազմական ճանապարհով»:

Տես էջ 3

Կայացավ ՀՅԴ պատգամավորների ընտրանքը

Երեկ ՀՅԴ Բյուրոյի գրասենյակում կայացավ կուսակցության Երեւանում վերահրատարակվող պատգամավորներ «Դրոշակի» առաջին 5 պրակների ընտրանքը: Շնորհավորում ենք:

«Ռոյալ Արմենիան» մեղավոր ճանաչվեց

Հրապարակվեց «Ռոյալ-Արմենիայի» դատավճիռը: Առաջին ատյանի դատարանում արդարացված այդ ընկերության սեփականատերերը վերաքննիչ քրեական դատարանում ճանաչվեցին մեղավոր: «Ռոյալ-Արմենիայի» գործադիր տնօրեն Արամ Ղազարյանը դատապարտվեց 2 տարվա, իսկ ընկերության համասեփականատեր Գագիկ Հակոբյանը՝ 6 տարվա ազատազրկման: Սակայն Արամ Ղազարյանը չի մեկուսացվի, քանի որ պատժաչափի 1,9 տարին արդեն անց է կացրել մեկուսարանում:

Բերեզովսկու յուրացումը հաստատվեց

Նախկին ռուսաստանցի ձեռնարկատեր Բորիս Բերեզովսկին հեռակա կարգով մեղավոր է ճանաչվել «Աերոֆլոտ» ավիաընկերությունից ավելի քան 241 մլն ռուբլու հափշտակման մեջ: Այդ մասին ասվում է Մոսկվայի Սավելեւյան դատարանի դատավճռում: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ ավելի վաղ դատախազությունը պահանջել էր Բերեզովսկուն դատապարտել 9 տարվա ազատազրկման: Սակայն ոչինչ չի հաղորդվում Բերեզովսկու պատժաչափի վերաբերյալ մոսկովյան դատարանի որոշման առնչությամբ:

2007-ին զոհվել է 142 լրագրող

Լրագրողի մասնագիտությունը շարունակում է մնալ ամենավտանգավորներից մեկը աշխարհում, այս առումով 2007-ը եղել է ռեկորդային: Ըստ Տեղեկատվական անվտանգության միջազգային ինստիտուտի, ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչեւ նոյեմբերի 28-ը 35 երկրներում զոհվել են 142 լրագրողներ եւ ԶԼՄ-ների տարբեր մասնագիտության 29 աշխատակիցներ (վարորդներ, թարգմանիչներ եւ տեխնիկական աշխատողներ):

Այս տարվա ընթացքում ԶԼՄ-ների զոհված աշխատակիցների մեծ մասը՝ 121 մարդ, սպանվել են իրենց պարտականությունները կատարելու ժամանակ, 15-ը՝ պատահական գնդակից, եւս 34-ը զոհ են տրանսպորտային կամ ավիացիոն պատահարների: ԶԼՄ-ների ամենամեծ թվով աշխատակիցներ զոհվել են Իրաքում՝ 64, իսկ պատերազմի սկզբից՝ առնվազն 235 լրագրող:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Լեւոն Տեր-Պետրոսյանը ինքնաառաջադրվեց

Նոյեմբերի 29-ին ԿԸՀ են ներկայացվել առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածության առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Ինչպես եւ սպասվում էր, Տեր-Պետրոսյանը ինքնաառաջադրվել է: Այսպիսով, նոյեմբերի 29-ի կեսօրի դրությամբ պաշտոնապես առաջադրվել են նախագահի երկու թեկնածուներ՝ «Ազգային միաբանություն» կուսակցության նախագահ Արշաուս Գեղամյանը՝ կուսակցության որոշմամբ, եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Հիշեցնենք, որ նախագահի 2008-ի փետրվարի 19-ի ընտրություններին թեկնածուների առաջադրման վերջնաժամկետը դեկտեմբերի 6-ի ժամը 18:00-ն է:

Քաղաքական գործիչների ամենասիրելի փաստաթուղթը

Հայաստանում 10 տարվա քաղաքացիության եւ 10 տարվա մշտական բնակության մասին տեղեկանք ստանալու համար ոստիկանություն են դիմել ՀՅԴ բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը, ԱԺՄ-ի նախագահ Վազգեն Մանուկյանը, քաղաքացիներ Հրաչյա Սարգսյանը, Մյասնիկ Խաչատրյանը եւ Միհր Մկրտումյանը: Մինչ օրս ոստիկանություն դիմած քաղաքական գործիչներից մերժում են ստացել «Նոր ժամանակներ» կուսակցության առաջնորդ Արամ Կարապետյանը եւ «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը: Ի դեպ, այսօր պետք է տեղի ունենա ՀՅԴ համագումարը, որը եւ կորոշի ում առաջադրել՝ Արմեն Ռուսամյանի՞ն, թե՞ Վահան Հովհաննիսյանին: Կարելի է կարծել՝ Վահան Հովհաննիսյանը վստահ է, որ կստանա իր կուսակիցների աջակցությունը, քանի որ նա արդեն իսկ դիմել է տեղեկանքի համար:

Մարդահամարից հետո գյուղատնտեսության համատարած հաշվառումը երկրորդ կարեւոր միջոցառումն է

ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը յուրաքանչյուր 10 տարին մեկ մշակում է գյուղատնտեսության համատարած հաշվառման ծրագիր, օժանդակելով ՄԱԿ-ի անդամ երկրներին գյուղատնտեսության հաշվառման գործում: Երեկ կառավարության հաստատած «Գյուղատնտեսության համատարած հաշվառման մասին» օրենքի նախագիծը լրագրողներին ներկայացրեց ազգային վիճակագրական ծառայության պետ Ստեփան Մնացականյանը:

Ազգային վիճակագրական ծառայության պետը հայտնեց, որ այս օրենքի նպատակն է ստանալ առավել հանգամանալի տեղեկություններ գյուղատնտեսության նշանակության հողերի, անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի եւ գյուղատնտեսական նշանակության շինությունների, մարդկային եւ նյութական ներուժի ու դրանց օգտագործման մասին, ձեւավորել գյուղատնտեսական հաշվառման ամբողջական համակարգ:

Ըստ ընդունված օրենքի, գյուղատնտեսության հաշվառումը Հայաստանում նույնպես կանցկացվի 10 տարին մեկ, կստեղծվեն հաշվառման հանրապետական եւ մարզային կենտրոններ, հաշվառման որոշումը կընդունվի ոչ ուշ, քան սկսելուց մեկ տարի առաջ: Ստեփան Մնացականյանի հավաստմամբ, հաշվառումն անցկացնելուն վերջնականապես պատրաստ կլինենք 2008-ի վերջին, 2009-ին կանցկացվի փորձնական հաշվառում, իսկ 2010-ի տարեսկզբին, ամենայն հավանականությամբ, կանցկացվի համատարած հաշվառումը: Այս պահի գներով, այդ միջոցառումը կարժենա 1,2 մլրդ դրամից 1,7 մլրդ դրամ:

Մեր այն հարցին, թե համատարած հաշվառումը որքանո՞վ կնպաստի գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական առավել հավաստի տվյալներ ստանալուն, ազգային վիճակագրական ծառայության պետը պատասխանեց, որ այն բազա է ստեղծում ծառայության ընտրանքային հետազոտություններն ավելի լավ կազմակերպելու եւ ճիշտ տվյալներ ստանալու համար:

Ա. Մ.

«Իմ գործընկերներից ոչ ոք 2008-ը ավելի ռիսկային չի համարում»

Հավաստիացնում է Հայաստանի եւ գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը

Յուրաքանչյուր քաղաքական գործընթաց այս կամ այն կերպ ազդում է տնտեսության ու գործարարության վրա: Կախված երկրներում ժողովրդավարության, քաղաքական ավանդույթների, տնտեսական զարգացման մակարդակից, հասարակության ընկալումներից այդ ազդեցությունը կարող է աննկատ լինել կամ լրջորեն արգելակել տնտեսության զարգացումը: Հայաստանն այս առումով, ներկա փուլում, ի՞նչ վիճակում է հայտնվել: Այս հարցի շուրջը զրուցեցինք Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահ Արսեն Ղազարյանի հետ, որը, թերեւս, մեր գործարար կյանքի բոլոր նրբերանգներն ամենալավ իմացող մարդկանցից է:

- Սովորաբար քաղաքական գործընթացներն իրենց ազդեցությունն են ունենում տնտեսության վրա եւ հատկապես նախընտրական շրջանում: Արդեն անցած խորհրդարանական ընտրությունների շրջանում Դուք այդպիսի միտումներ նկատեցի՞ք եւ առաջիկա նախագահական ընտրությունների առնչությամբ նման մտահոգություններ կա՞ն:

- Արդեն 17 տարվա անկախ պետություն ենք եւ 15 տարվա ձեւավորված շուկայական տնտեսություն ունենք: Ունենք հմուտ եւ ճկուն հայ գործարարություն եւ սովորել ենք նախընտրական ժամանակներում բիզնեսը կառավարել այնպես, որ ազդեցությունը նվազագույն լինի: Դա հատկապես երեւաց խորհրդարանական ընտրություններից առաջ: Բոլորիս մեջ կար մտահոգություն, որ այն կարող էր ազդել զարգացման տեմպերի վրա, բայց դա չեղավ: Ըստ էության այն նախանշումները, որ կային սահմանված թե՛ պետության կողմից (բյուջեի մասով), թե՛ մասնավորի կողմից, չենթարկվեցին բացասական ազդեցության նախընտրական պայքարի ժամանակ: Սա համոզմունք է առաջացնում, որ գործարարությունը սովորել է նման իրավիճակներում նորմալ բիզնես անել:

Տես էջ 4

Դատարանը մերժեց «Ֆիրդուսնոցի» բնակիչների հայցը

Բնակիչները դիմելու են վերաքննիչ դատարան

Մարտ ամսից Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին աստյանի դատարանի դատավոր Գայանե Կարախանյանի վարույթում գտնվող «Ֆիրդուսնոցի» բնակիչների հայցն ընդդեմ կառավարության որոշման երեկ վերջնականապես «լուծում» ստացավ: Հիշեցնենք, որ «Ֆիրդուսնոցի» կամ 33-րդ թաղամասի բնակիչները դատարանում վիճարկում էին կառավարության 2007-ի հունվարի 25-ի ընդունած թիվ 108-Ն որոշումը՝ «Երեւան քաղաքի վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման կարգն ու նկարագրության օրինակելի ձեւը հաստատելու մասին»:

Դատարանի դատավոր Գայանե Կարախանյանը բազմամարդ դահլիճում երեկ կարդաց իր կայացրած վճիռը, որով մերժեց բնակիչների հայցն ընդդեմ կառավարության որոշման՝ նշելով, որ կառավարության որոշման ընդունման ընթացքում խստագույնս պահպանված են օրենքի նորմերի պահանջները, հետեւաբար հայցվորի դիմումն անհիմն է ու ենթակա չէ բավարարման:

Դատավճռի հրապարակումից հետո դատավորն անմիջապես հեռացավ դահլիճից, իսկ 33-րդ թաղամասի բնակիչները սկսեցին բարձրաձայն իրենց դժգոհությունը հայտնել՝ իշխանություններին ու դատարանին համարելով ծախված, երկիրն՝ անօրինական, մարդկանց իրավունքները՝ չպաշտպանված: Մինչ հրապարակումը, թեեւ բազմաթիվ նիստերի ընթացքում պատասխանող կողմից որեւէ ծանրակշիռ հակափաստարկ չէր արձանագրվել, բնակիչներն արդեն համոզված էին, որ վճիռը հօգուտ իրենց չի լինելու եւ արդեն հայտնում էին իրենց դժգոհությունը: 33-րդ թաղամասի բնակիչները պատրաստվում են իրենց գործը հասցնել դատական ամենաբարձր աստյաններին, մինչեւ անգամ դիմել Եվրոդատարան:

Իսկ ո՞ւմ է բնակիչների հիմնական դժգոհությունը:

Բնակիչների խոսքով, իրենք մինչ օրս չգիտեն, թե իրենց բնակարանների, սեփականությունների տեղում ինչ է կառուցվելու: Դատավարության ամբողջ ընթացքում բնակիչների փաստաբաններ Արթուր Գրիգորյանն ու Վահե Գրիգորյանը բազմիցս բարձրացրել են այդ հարցը: Բնակիչներին հիշյալ հարցն այնքանով է մտահոգում, որ իմանալով, թե ինչ է կառուցվելու իրենց սեփականությունների փոխարեն, նրանք կորոշեն, թե որքանով է իրենց սեփականությունների օտարումը բխում հանրային բացառիկ գերակա շահ ասվածից: Պատասխանող կողմը դատարանում ասել էր, որ իրենց էլ դեռ հայտնի չէ, թե ինչ է կառուցվելու 33-րդ թաղամասում:

33-րդ թաղամասի բնակիչներին հուզող հաջորդ հարցը հետեւյալն էր. Տարածքը ձեռք բերող ընկերության ներկայացուցիչը փաստաբանի հարցին պատասխանելիս դատավարության ընթացքում նշել էր, թե իրենց իրականացրած ծրագիրը շահույթ հետապնդող է, իսկ հետագայում շեշտելով իրեն՝ նշել էր, որ իրենք ոչ թե շահույթ են հետապնդում, այլ իրենց կազմակերպությունն է համարվում շահույթ հետապնդող: «Որքանո՞վ են համաչափելի հասարակության եւ պետության կարիքները շահույթ հետապնդելու հետ», տարակուսում են բնակիչները:

Դատարանից աղմուկով հեռացած բնակիչները որոշեցին առաջին աստյանի դատարանի վճիռը բողոքարկել վերաքննիչ դատարանում:

Գ. Գ.

«Ես իմ տան մեջ թագավոր եմ, իմ ամեն մի հրաման բոլորի ուրով է»

Հակոբկոխյանի մեդալներն ութ միլիոն արժեցան

Երեկ «Ազգակ» ակումբ հրավիրված բոնցֆամարտի աշխարհի նախկին չեմպիոն Իսրայել Հակոբկոխյանը դժգոհություն հայտնեց հեռատաքնկերություններից իրեն հարցազրույցների չհրավիրելու համար: Բանն այն է, որ Իսրայելը, ինչպես վերջինս խնդրեց իրեն կոչել, հայտարարություններ ունի անելու: Նախ, ընտրություններին իր թեկնածությունը դնելու համար չունի պահանջվող ութ միլիոն դրամը, եւ այս ամենի համար պատրաստ է վաճառել իր վաստակած բոլոր մեդալները: Իսկ թե ինչպես է քաղաքականությամբ հետաքրքրվող չեմպիոնը պատրաստվում պայքարի մեջ մտնել տարբեր քաղաքական ուժերի հետ, վերջինս պատասխանեց.

«Կարո՞ղ է ձեզանից ինչ-որ մեկն ասել, թե ինչ է քաղաքականությունը, ես էլ կասեմ՝ նոր եմ մտել, թե՞ ոչ: 90-ականներին երկրում կատարվող իրադարձությունները ուղիղ եթերում ես իմ կարծիքն եմ արտահայտել՝ մեջբերելով ՀՀՇ-ի վերաբերյալ իմ խոսքը՝ հավայի հայող ըներ: Սակայն չեմ ուզում դրան անդրադառնալ: Ուզում եմ իմանալ՝ քաղաքականությունը արհե՞ստ է, արվե՞ստ է, թե՞ ուսելու բան»:

Իսկ թե չի՞ ափսոսում Հակոբկոխյանը իր քրտինքով վաստակած մեդալները վաճառել թեկնածությունը դնելու համար, ասաց. «Բոլորս աղում եւ անում ենք ամեն ինչ հանուն մեր երեխաների: Եթե պարկերով միլիարդներ ունենաս ու ափսոսես օգտագործել, ո՞ւմ է պետք այդ հարստությունը: Եթե իմ արյուն-քրտինքով վաստակած մեդալները պետք է դնեմ մի տեղ ու չկարողանամ իմ երեխաներին ապագա ստեղծել, ինչո՞ւ պետք է հայ կոչվեմ: Մարդիկ կան, որ ասում են՝ դու Սովետական Միության բոնցֆամարտիկ ես, դու հայ ազգի համար չես այդ մեդալները բերել: Դրա համար էլ կարելի է դիմել նաեւ Պուտինին՝ քանի որ այսօր Ռուսաստանն է նախկին Սովետական Միության երկրների լավի ու վատի պատասխանատուն»:

Իսրայելն անդրադարձավ նաեւ այսօրվա իրական վիճակին՝ հավելելով, որ իրեն սփոփում են ականջներով տեսնել, այլերով էլ լսել: Եվ խոսում են տնտեսական աճի մասին. «Ես տեսնում եմ աճ միայն մարմնավաճառության եւ հոգեվաճառության բնագավառում: Եթե մի ժամանակ մարմնավաճառ լինելը ամոթ բան էր, այսօր մարմինը վաճառելով շատ լավ սնվում են, շրջապատված են «լավ» մարդկանցով: Մտածում են՝ միգուցե դա է ճիշտը: Աշխատավարձերը բարձրացնելով գցում են դոլարի գինը: Եթե ասում են՝ աշխատատեղեր են բացել՝ դրանք միայն ճորտատեղեր են, մենք էլ ճորտեր»:

Պարզվում է, որ Իսրայելն իր տան մեջ թագավոր է՝ իր ամեն մի հրաման հաստատվում է առնվում ու բոլորի ուրով է: Իսկ թե նույն տրամաբանությամբ ու հոգեբանությա՞մբ է պատրաստվում նախագահ դառնալ՝ փորձեց պատասխանն այսպես ձեւակերպել.

«Իշխանավորները մեզ համոզում են, որ գալիս են ծառայելու, բայց գալիս, մեզ են ծառայեցնում: Տղամարդու խոսքը բերանից է գալիս, ոչ թե մարմնի այլ մասերից»:

Նախագահի թեկնածություն առաջադրող նախկին բոնցֆամարտիկը ներկայացրեց իր մոտեցումները Ղարաբաղի հարցի վերաբերյալ. «Ղարաբաղը պետք է լինի մեկ մարզ, օրենսդրորեն մարզպետ է լինի ընտրությունների ձեւով: Իմ հարցերի հարցն այն է, որ հայ ազգը պետք է ունենա մեկ հայրենիք»;

Իսկ թե ինչ վերաբերմունք ունի նախկին եւ գործող իշխանությունների նկատմամբ՝ Հակոբկոխյանը երկար մտորելով ասաց. «Գիտեմ, ընկածին չեն խփում: Ներկաներից եթե գոհ լինեի, ինձ չեի առաջադրի: Շատ մեծ ուղեղի տեր մարդ է Սերժ Ազատի Սարգսյանը, շատ էլ լավ մարդկանց հետ շփվել գիտի: Բայց իր գործով նա չի բավարարում, դրա համար էլ ուզում եմ առաջադրվել: Ինչպես կարող է մի նախարար տեղափոխվել մեկ այլ բնագավառ ու լավ աշխատել: Երկու կարգին քաղաքական ընտրությունը լավ չէ»;

Վերջում բոնցֆամարտիկ Հակոբկոխյանը հոտնկայս արեց իր հայտարարությունն ուղղված ՀՀ նախագահին. «Նամակ ամենայն հայոց թագավորին: Մեծարգո, հարգարժան, ամենայն հայոց թագավոր Ռոբերտ Քոչարյան: Խնդրում եմ Ձեզ ինձ աջակցեք իմ արյուն-քրտինքով վաստակած մեդալները դնել գրավ Կենտրոնական բանկում: Ձեր օգնությունը կկայանա նրանում, որ պայմանները լինեն այնպիսին, ինչպիսին որ մեր երկրին վարկ են տալիս մյուս պետությունները 0,01 տոկոսադրույքով՝ մեկ տարի ժամկետով: Գրավի դիմաց պատրաստ եմ դնել ոչ թե մեկ, այլ իմ վաստակած բոլոր մեդալները, որի դիմաց տան ինձ ութ միլիոն դրամ, որպեսզի ես կարողանամ մասնակցել նախագահական ընտրություններին: Չընտրվելու դեպքում խոստանում եմ մեկ տարվա ընթացքում այդ գրավը վերադարձնել»:

ՆԱՌԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲՈՂՈՔԻ ՍՍԱՐԼԻՍ

«Խաղաղ հեղափոխությամբ իշխանությունը Հայաստանում փոխելու ենք»

Հիմա էլ Արամ Կարապետյանն է համախմբվելու կոչ անում

Նախագահական ընտրություններին պատրաստվող մեր երկրի ներքաղաքական կյանքում ոչինչ արդեն գրեթե բացառված չէ. նորությունների ու սուր անկյունների կարիք էլ կարծես չի զգացվում, քանի որ դեռ պաշտոնական քարոզարշավը չմեկնարկած մի շարք անակնկալներ արդեն իսկ եղան:

«Նոր ժամանակներ» կուսակցության (ՆԺԿ) նախագահ Արամ Կարապետյանին վերջին տարը տարում ՀՀ-ում ծշտապես բնակվելու մասին տեղեկանք չտրամադրելու ոստիկանության նախարարի քայլը վրդովեցրել է Արամ Կարապետյանին ու բնականորեն առաջ բերել մի շարք հարցեր, որոնց պատասխանները եթե անգամ ՆԺԿ առաջնորդին հայտնի են, հասարակության համար անհասկանալի են: Նախ՝ աբսուրդ է, երբ 2003-ի նախագահականին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթուղթ ունեցող անձն այսօր հանկարծ փաստաթղթի խնդիր է ունենում, մյուս կողմից, որքան էլ կուսակցության առաջնորդը կասարվածում մեղադրեց իշխանություններին, անհասկանալի է, թե Արամ Կարապետյանին տեղեկանք չտալն ու աղմուկ բարձրացնելը որքանով էր ձեռնտու հենց իշխանություններին: Չէ՞ որ ՆԺԿ առաջնորդը մասնակցեց նաեւ խորհրդարանական ընտրություններին եւ իշխանությունների համար առանձնապես խնդիր չեղավ նրա օգտին արձանագրված էվեները ներկայացնելը: Ամեն է ձեռնտու Արամ Կարապետյանի աղմուկը հարցը շատ տարբեր պատասխանների կարող է հանգեցնել, բայց այս պահին կա միայն Արամ Կարապետյանի կարծիքը:

Երեկ հրավիրված մամուլի ասուլիսում Արամ Կարապետյանը հայտարարեց, որ ինքն արդեն դիմել է դատարան, իսկ իրեն բնակության տեղեկանք չտալը քաղաքական պատվեր որակեց, քանի որ ոստիկանությունն իր դիմումը մերժելիս որեւէ պատճառ կամ փաստարկ չի վկայակոչել: ՆԺԿ ղեկավարը փաստեց, որ 2005-ին իրեն տված անձնագրում արձանագրված է, որ ինքը 1992-ից ՀՀ քաղաքացի է: Արամ Կարապետյանի համար կասկածից վեր էր, որ իր հետ նման մի բան պատահելու է. «Դիմել ենք դատարան, բայց, կարծում եմ, քաղաքական պատվերի շրջանակներում զգուշացված կլինի նաեւ դատարանը: Այս ամենի հիմքում ընկած է մեկ բան, որ կոչվում է վախ, եւ այդ վախի մթնոլորտը սովորական չինովնիկից տարածվում է մինչեւ նախագահ: Կասկածից վեր էր, որ այսպիսի բան կլիներ, բայց հասկանալի է, որ ընտրությունների ընթացքն արդեն գծված է: Սերժ Սարգսյանը փորձելու է դառնալ նախագահ, եթե այսպես ուժի միջոցով է վարվելու եւ Հայաստանում մեծ հոսանք ու ալիք է պահանջվելու, որպեսզի այս ամենի դեմ պայքարենք ու, վերջ ի վերջո, ես համոզված եմ, այս իշխանություններից ազատվենք»:

ՆԺԿ ղեկավարն ասաց, որ այժմ իրենց ամբողջ պայքարը միտված է լինելու ժողովրդական ալիքի բարձրացմանը, որովհետեւ համոզված է, որ ընտրությունների ավարտին, ընտրության բոլոր իսկապես ընդդիմադիր մասնակիցները սեղմված կլինեն ժողովրդական ալիքի միջոցով պայքարել այն կեղծիքների դեմ, որոնք կլինեն: «Մենք ընտրազանգվածին կոչ ենք անելու խաղաղ հեղափոխությամբ Հայաստանում իշխանությունը փոխել: Մենք անհասկանալի որեւէ մեկին չենք միանալու: Ես ոչ թե գունավոր, այլ ազգային հեղափոխության կողմնակից եմ: Շախի-շախի երկիր ենք դարձել, տղե՛ր, աջ կանգնեք, տղե՛ր, ձախ կանգնեք, օրենքն ընդհանրապես չի գործում, բեսպրեդել է: Պետք է ամբողջությամբ այս իշխանությանը փոխել»:

Թե ինչո՞ւ Արամ Կարապետյանին զրկեցին բնակավայրի տեղեկանքից՝ ՆԺԿ առաջնորդը մեկնաբանում է իշխանությունների ունեցած վախով. «Վախեցան, որ պիտի խոսեի հեռուստատեսությամբ եւ այնպիսի բաներ ասեի, որ ինձ պետք է զրկեին: Վախեցան ճշմարտությունը լսելուց»: Արամ Կարապետյանը սակայն վստահեցրեց, որ նախագահի թեկնածու լինելու առիթից զրկվելով չի լռելու եւ մյուս գործիչներից իր գումարով եթերաժամանակ է գնելու:

«Բոլոր ուժերը կոչ են անում իշխանություններին հեռացնելու համար իրենց կողմը կանգնել: Իրականում ինչպե՞ս պիտի լինի այդ գործընթացը, որ համախմբվեք, երբ ամենքն իրենց տարբերակն են առաջարկում», «Ազգի» հարցին Արամ Կարապետյանը պատասխանեց, որ այսօրվա Հայաստանում կա մեկ գաղափար՝ հեռացնել իշխանություններին, եւ եթե կարողանան այդ գաղափարի շուրջը համագործակցել, լավ կլինի, իսկ դրանից հետո էլ հարցը կլուծվի ընտրությունների միջոցով. «Հավատալու ենք եւ հարցը լուծենք (նկատի ունի ժողովրդական դժգոհության ալիքի միջոցով իշխանություններին հեռացնելը- Գ. Գ.), դրանից հետո են լինելու ընտրությունները»:

Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ ավազակապետությունը կազմաքանդելու առաջարկին միանալու հարցին ինչեց կուսակցավարի հետեւյալ պատասխանը. «Իսկ երբ մենք էինք կազմաքանդում ավազակապետությունը, Լեւոն Տեր-Պետրոսյանը լուռ նստած էր: Երբ ալֆան (նկատի ունի հատուկ ջոկատայիններին-Գ. Գ.) մեզ պատկեցնում էր, երբ մեր տղաներին կրակեցին Սեւանում, որտե՞ղ էր ինքը, լուռ նստած էր»:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԳ տարի

Պիտանիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Թեմ: 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՀԱՎԵԴԻԿՅԱՆ Հ. / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ / հեռ. 529221

Հասարակական (գրավոր) / հեռ. 582960

Տնտեսության մասնակ / հեռ. 581841

Հանձնարարական գնահատումներ / հեռ. 582483

Տարբերակ լրահաղորդումներ
/ հեռ. 529353

Հանձնարարական գնահատումը «Ազգ» թերթի
Թերթի նիութերի ամբողջական թե մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրաւոր համաձայնության խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիութերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԵԱՀԿ ՄԽ համանախագահները «թարմացնում են» սեղանին եղած փաստաթուղթը

1-ին էջից

«Ազգի» դիտարկմանը, թե համանախագահներ Մեթյու Բրայզան եւ Բեռնար Ֆասիեն հույս են հայտնել մինչեւ հունվար որոշակի պատասխան, անգամ համաձայնություն սանալ կողմերից Մադրիդում հանդիպման ժամանակ ներկայացված ձեւակերպումների առնչությամբ, Մամեդյարովը հայտարարեց. «Սատանան մանրամասներում է. պետք է ուշադիր ուսումնասիրել այդ մանրամասները: Ես, անկեղծ ասած, կարծում եմ, որ շատ ավելի ժամանակ կպահանջվի, իր հերթին, հայկական կողմին համոզելու, որ դա Հայաստանի շահերից է բխում: Ես միշտ տպավորություն եմ ունենում, թե բոլոր այն կետերում, որտեղ մենք տեղատոյտ ենք ունենում, հետո սխիվված ենք լինում ավելի շատ ջանք ներդնել հայկական կողմին համոզելու, որ դա իրենց ազգային շահն է»: «Եթե հայեցակարգային մոտեցում ցուցաբերենք, ապա մենք հարեւաններ ենք, ոչ մեկը հողը չի կարող վերցնել, փախչել կամ պատ կառուցել: Պետք է գտնենք հարաբերությունների ուղվագծեր», նշեց Մամեդյարովը:

Ադրբեջանում նախագահական ընտրություններ են սպասվում: Թե որքան ժողովրդավարական են անցնելու այդ ընտրությունները՝ **«Ազգի»** հարցին Մամեդյարովը պատասխանեց. «Ես կարծում եմ, որ Ադրբեջանում ժողովրդավարության մակարդակը չի ենթարկվում եւ, իհարկե, ընտրությունները կանցնեն բացարձակապես ժողովրդավարական, ինչպես ասում են անգլերեն՝ free and fair (ազատ եւ արդար)»: Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղին «ինքնավարություն» տրամադրելու պատրաստակամության ադրբեջանական հայտարարությունները՝ **«Ազգի»** լրացմանը, թե free and fair-ն արդյոք Ադրբեջանում զուգակցվո՞ղ է լրագրողների ձերբակալություններով, հացադուլներով, արտգործնախարարը նշեց, թե «ձերբակալված լրագրողներից ոչ մեկը չի հայտնվել ներկա վիճակում մասնագիտական գործունեության պատճառով»: «Եվ հավատացեք, որ լրագրողական եւ մամուլի ազատության մակարդակը Ադրբեջանում ոչնչով վատ չէ Հայաստանից: Եթե մենք խոսենք Ա1+-ի, «Նոյյան տապանի» փակ լինելու մասին, չեմ անցկացնում զուգահեռներ, բայց ամեն երկիր ունի զարգացման իր մակարդակը, այդ դեպքում ոչ մեկին խորհուրդ չեմ տա զուգահեռներ անցկացնել»:

Պատերազմի կոչերը վտանգավոր են հենց ադրբեջանցիների համար

Նույն հանդիպումից հետո Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը Մամեդյարովի հայտարարությունների առնչությամբ «Ազգի» հարցին ի պատասխան նշեց, որ անկախ ռազմատենչ հայտարարություն անողից՝ դրանք օգտակար չեն, խանգարում են գործընթացին, ժողովրդի մեջ տարբեր տրամադրություններ են ստեղծում, փոխզիջման հնարավորությունն ավելի նվազ է դառնում:

«Իսկ ամենավտանգավորը հենց ադրբեջանցիների համար է, իրենց ժողովրդին ինչ-որ հույսեր են ներշնչում», ասաց Օսկանյանը, ավելացնելով, որ բանակցային գործընթացի առումով նոյեմբերի խանինի հանդիպման մակարդակն ավելի բարձր էր՝ համանախագահող երկրների ԱԳ նախարարների մասնակցությամբ: «Սա վկայություն է, որ նրանք դեռեւս հույսեր կապում են բանակցային գործընթացի հետ եւ գտնում են, որ սեղանի վրա եղած փաստաթուղթը միակ ճանապարհն է հասնելու հարցի կարգավորմանը»:

Փաստաթղթում դեռեւս կան չհամաձայնեցված հարցեր: «Եվ այսօրվա հանդիպման հիմնական միտումն էր չհամաձայնեցված հարցերի շուրջը նման բարձր մակարդակով ներկայացնել արդեն համանախագահող երկրների տեսակետները կողմերի քննարկման համար: «Ներկայացվել է նույն փաստաթուղթը, որ սեղանին է, դրա թարմացված տարբերակն է՝ չհամաձայնեցված հարցերի առումով, այսօր համանախագահողները տվել են կողմերին այն, ինչ իրենք են պատկերացնում չհամաձայնեցված հարցերի կապակցությամբ»:

ԼՂ կարգավիճակի հարցը չքննարկելու Մամեդյարովի հայտարարության առումով Օսկանյանը նշեց, որ կարգավիճակը առանցքային հարցերից մեկն է եւ կա ընդհանուր համաձայնություն, որ պետք է թույլ տալ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ինքնորոշվելու: «Եթե Մամեդյարովը նկատի ունի, որ չի քննարկվում, որովհետեւ այնտեղ խնդիր չկա, բոլորը համաձայն են, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պետք է ինքնորոշվի, ուրեմն հարցն այդ իմաստով լուծված է: Ես կարող եմ ասել, որ կան չհամաձայնեցված հարցեր, որոնց քննարկումները շարունակվում են, դրանք այսօր ավելի կոնկրետ դարձան, սպասենք, տեսնենք, ինչ կլինեն կողմերի պատասխանները»:

Հայաստանի ԱԳ նախարար Օսկանյանի կարծիքով, ԵԱՀԿ երկրների ԱԳ նախարարների խորհրդի ընդհանուր դեկլարացիայի ընդունումը կասկածելի է: «Կան դեռ բազմաթիվ հարցեր, որոնց շուրջը համաձայնություն չկա՝ կապված հակամարտությունների, սպառազինության պայմանագրի եւ այլ հարցերի հետ: Բայց եթե լինի դեկլարացիա, այնտեղ կլինի Ղարաբաղի մասին համաձայնեցված պարբերություն, որի առումով մեծ հաշվով համաձայնության եկել ենք, մի քանի փոքր հարցեր մնում են, բայց կարծում եմ՝ կկարողանանք համաձայնության գալ»:

«Պետք է ամեն ինչ անել հասնելու հարցի կարգավորմանը՝ հաշվի առնելով այսօր հետաքրքրական, հավասարակշռված փաստաթուղթը: Չհամաձայնեցված հարցերը շատ չեն, բայց ասել՝ մեկ-երկուսն է, սխալ է: Սկզբունքը մեկն է. մինչեւ բոլոր հարցերի շուրջը համաձայնություն չլինի, չենք կարող ասել, որ որեւէ հարցի շուրջը եղել է համաձայնություն: Սա ԵԱՀԿ սկզբունքն է, որը մենք կիրառում ենք նաեւ մեր բանակցություններում», նշեց Օսկանյանը:

Համանախագահներ Բրայզան ու Ֆասիեն մնում են «ժպտադեմ»

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ **Մեթյու Բրայզան**, իր հերթին, նշեց, որ հանդիպումը հնարավորություն էր երկու կողմերին փոխանցելու համանախագահների լավագույն փոխզիջումային առաջարկը հիմնարար սկզբունքների մասին: Ըստ Բրայզայի, ներկայումս համանախագահներն անում են լավագույնը փոխզիջումային ձեւակերպումներ առաջարկելու համար: Բրայզան հույս հայտնեց, թե ներկայացվածին համաձայնություն կտան մինչեւ ընտրությունները:

«Ազգը» հետաքրքրվեց, թե արդյոք ԵԱՀԿ ՄԽ համանախագահները հանդես կգա՞ն հայտարարությամբ: Բրայզան նշեց, թե ներկա դրությամբ ավելի հավանական է, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցի առնչությամբ նշում կարվի ԵԱՀԿ երկրների արտգործնախարարների խորհրդում պատրաստվող դեկլարացիայում:

Պատերազմի ադրբեջանցի նախարարի ռազմատենչության առնչությամբ **«Ազգի»** հարցին ամերիկացի համանախագահը պատասխանեց. «Համանախագահող երեք երկրները մեծապես վստահ են, որ այս երկրների համար որեւէ ռազմական լուծում չկա: Բանակցությունները միակ հնարավորությունն են»: Իսկ որ նման ռազմատենչ հայտարարությունները վնասում են բանակցային գործընթացին, Բրայզան գտնում է, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը խաղաղ գործընթաց է, որում պատերազմը տեղ չունի:

Ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն էլ հայտարարեց, որ նոր առաջարկություն չի արվել Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներին, այլ հանձնվել է հիմնարար սկզբունքների ամբողջական ներկայացումը: «Սկզբունքների մեծ մասը կողմերն արդեն ընդունել են որպես արդար եւ հավասար հիմք: Սկզբունքների մի մասը դեռ մնում են որպես դժվար հարցեր»:

Ֆրանսիացի համանախագահի վկայությամբ, իրենք շարունակում են բանակցությունների գործընթացի միջնորդությունը, հաճախակի լինում են Հայաստանի եւ Ադրբեջանի մայրաքաղաքներում, հանդիպում նախարարների ու նախագահների հետ՝ փորձելով նեղացնել բացը չհամաձայնեցված հարցերում: Ընդ որում, դրանք անհնար փոփոխություններ չեն, այլ արդար առաջարկ նախագահներին՝ քննարկելու համար:

Տարվա վերջին կամ հունվարի կեսերին համանախագահները կրկին կլինեն տարածաշրջանում՝ «նախագահներին հարցնելու նրանց արձագանքը, թե ինչն է այս անգամ ընդունելի կամ էլ ինչ նոր գաղափարներ են առաջացել դրանց հիման վրա»: Ֆասիեն կրկին անգամ հիշեցրեց տուն կառուցելու համեմատությունը: «Մենք հաստատակամորեն խորհուրդ ենք տալիս կողմերին վերջացնել հիմքի կառուցումը եւ ընդհանրական կառուցված այդ հիմքով սկսել մշակել խաղաղ կարգավորումը»:

Նախարարական խորհուրդն ու երկկողմ հանդիպումները

ԵԱՀԿ ԱԳ նախարարական խորհուրդը, ըստ Օսկանյանի, շատ կարեւոր հանդիպում է, քանի որ ԵԱՀԿ օրակարգում են տարբեր հարցեր. Կոսովո, սպառազինությունների հարց, Եվրոպայում բարեփոխումներ, Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական ինստիտուտների բյուրոյին առնչվող հարցեր եւ այլն: Երեկ տեղի ունեցան Վարդան Օսկանյանի հանդիպումները ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Նիկոլաս Բեռնսի, Ղազախստանի, Իսլանդիայի արտգործնախարարների, ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի հետ: Նախարարական խորհրդում ելույթ ունեցավ նաեւ Վարդան Օսկանյանը: Այսօր Օսկանյանը կհանդիպի Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի, Շվեյցարիայի եւ Ռումինիայի արտգործնախարարների, ինչպես նաեւ ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների եւ Մարդու իրավունքների բյուրոյի ներկայացուցչի հետ: Հայաստանի ԱԳ նախարարին կընդունի նաեւ ԵԱՀԿ գործող նախագահ Միգել Անխել Մորատինոսը:

Ինչ վերաբերում է նախարարական խորհրդի մոտեցմանը Հայաստանին, ապա Օսկանյանը նշեց, որ բոլորի ուշադրությունը նախագահական սպասվող ընտրություններինն է: «Նաեւ Ղարաբաղի հարցը, Եվրոպայում սովորական սպառազինության հարցը, որն, ի դեպ, վտանգվելու դեպքում կարող է լուրջ խնդիրներ հարուցել մեր ազգային անվտանգության համար, քանի որ միակ համակարգն է, որ թափանցիկություն է ապահովում տարածաշրջանում, ինչ թե շատ մեզ հնարավորություն է տալիս մեր բողոքը հայտնելու եւ առաքելություն պահանջելու, երբ խախտվում են սահմանափակումները Ադրբեջանում: Հայաստանի երկկողմ հանդիպումները կենտրոնանում են ԵԱՀԿ բարեփոխումների վրա, սպառազինությունների խնդիր, ԼՂ հարց, նախագահական ընտրություններ եւ այլն», նշեց Վարդան Օսկանյանը:

Եվրոմիությունը հավասարության նշան չի դնում մեր տարածաշրջանի հակամարտությունների միջեւ

ԵԱՀԿ ԱԳ նախարարների խորհրդում Եվրոմիության նախագահ **Լուիս Ամադուն** Եվրոմիության աջակցությունը հայտնեց «Լեռնային Ղարաբաղում, Վրաստանում եւ Մոլդովայում սառեցված հակամարտությունների խաղաղ կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ ջանքերին»:

Հստակորեն հավասարության նշան չդնելով հակամարտությունների միջեւ՝ Ամադուն ընդգծեց, որ Մինսկի խումբը եւ համանախագահները եռանդուն են աշխատում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման արդար եւ հավասարակշիռ հիմնարար սկզբունքների մշակման ուղղությամբ: «Եվրոմիությունը աջակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի ակտիվ երկխոսության շարունակմանը եւ կողմերին կոչ է անում ամբողջապես ներգրավվել բանակցություններում»:

Եվրոմիության խորհրդի նախագահն իր ելույթում աջակցություն է հայտնում նաեւ Վրաստանի եւ Մոլդովայի տարածքային ամբողջականությանը:

Իր հերթին, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ **Գորան Լենմարկերն** իր խոսքում նշեց, որ արդեն մոտ չորս տարի ակտիվորեն մասնակից է ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերի աջակցությանը՝ ԼՂ խնդրի կարգավորման առումով: «Ես նշել եմ, որ տեսնում եմ խաղաղ կարգավորման «ոսկե հնարավորություն»: Ես դեռ դրան հավատում եմ»: Հետաքրքրական է, որ, ըստ Լենմարկերի, առկա է շրջանակային լավ համաձայնագիր, որը պատրաստ է երկու երկրների առաջնորդների ստորագրման համար, եթե կա քաղաքական կամք: Այլընտրանքը՝ նոր պատերազմը անհերեւակայելի է»:

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

- Ժամը 10.30-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի մեծ դահլիճում կհյուրընկալվեն Ռուսաստանի մշակույթի ականավոր գործիչներ:
- Ժամը 11.00-ին Մամուլի ազգային ակումբում տեղի կունենա «Ժողովրդավարական հաստատությունների դերը եւ ազդեցությունը առաջիկա նախագահական ընտրություններում» թեմայով քննարկումը:
- Նույն ժամին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի կունենա ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված ասուլիս:
- Ժամը 11.00-ին Ազգային գրադարանում կկայանա հանդիպում Հայաստանում Չինաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի հետ:
- Ժամը 11.00-ին «Անի» հյուրանոցում կկազմակերպվի «ՀԿ սեկտորի ֆինանսական կայունություն» թեմայով քննարկում:
- Ժամը 12.00-ին «Տեսակետ» ակումբում տեղի կունենա հրեական համայնքի նախագահ Ռիմա Վարժապետյանի եւ Եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանի մամուլի ասուլիսը:
- Նույն ժամին «Փաստարկ» ակումբում կհյուրընկալվի Տիգրան Կարապետյանը:
- Ժամը 12.00-ին «Արարատ» հյուրանոցում տեղի կունենա «Արդյունավետ պետություն եւ ժողովրդավարություն. ընտրությունները եւ ընտրության խնդիրը» թեմայով քննարկում:
- Մեկ ժամ անց ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի կունենա «Թուրքիա. անվտանգության եւ պաշտպանության հիմնախնդիրները» ժողովածուի շնորհանդեսը:
- Ժամը 13.00-ին «Երեւան» հյուրանոցում տեղի կունենա միջոցառում ԳԱԼԱ TV-ի մասին:
- Ժամը 13.00-ին ԿԳ նախարարությունում տեղի կունենա փոխնախագահ Բագրատ Եսայանի մամուլի ասուլիսը:
- Նույն ժամին «Տեսակետ» ակումբում տեղի կունենա «Զինվոր» ՀԿ-ի համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհրդի ղեկավար Մ. Խաչատրյանի մամուլի ասուլիսը:
- Ժամը 14.00-ին ԵԱՀԿ հանրային ընդունարանում «Ամիլլես» կազմակերպությունը կներկայացնի վարորդների վարչական իրավախախտումների դատական գործերի մոնիտորինգի արդյունքները:
- Մեկ ժամ անց Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտում տեղի կունենա սեմինար «Լեհական ՁԼՄ-ների դերը կոռուպցիայի դեմ պայքարում» թեմայով:
- Ժամը 15.00-ին Գրողների միությունում տեղի կունենա հրապարակախոս Մարգո Ղուկասյանի «Սպանել խավարը» գրքի շնորհանդեսը:

Կրակոցներ Երեւանում

Ոստիկանությունից հաղորդում են, որ միջոցառումներ են ձեռնարկվում «Հայր եւ որդի Մարտիրոսյաններ» ՍՊԸ-ի սեփականատերերի դեմ նախօրեին բռնարարք գործած ոմն Արման եւ Համիկի անձը պարզելու՝ եւ նրանց հայտնաբերելու ուղղությամբ: Դեպքի առթիվ կատարվում է նախաքննություն: Հիշեցնենք, որ նոյեմբերի 28-ին, ժամը 16-ի սահմաններում Երեւանի Սիլիկյան թաղամասում գտնվող եւ նշված ընկերությանը պատկանող «Մարմարի աշխարհ» խանութ-արտադրամասի մոտ գումարային պարտքի շուրջը ծագած վիճաբանության ժամանակ ոմն Արման եւ ոմն Համիկ իրենց մոտ եղած ատրճանակներից կրակ են արձակել հայր եւ որդի Կարլեն (ծնված 1944 թ.) եւ Հրանտ Մարտիրոսյանների (ծնված 1974 թ.) ոտքերին, պատճառել մարմնական վնասվածքներ, դեպքի վայրում թողնելով «Մերսեդես-ՄԼ» մակնիշի ավտոմեքենան, դիմել փախուստի: Ցննությամբ դեպքի վայրից հայտնաբերվել են 9 մմ տրամաչափի փամփուշտի 2 պարկուճ եւ գնդակի 2 բեկոր:

Հնարավորություն՝ չափավոր, նպատակային ու հեռուստադիտողի նյարդերը խնայող գովազդի

Դեռահասության շրջանում շատերն են փորձում կրել մոր բարձրակրունկ կոշիկները կամ հոր գոտին, ու ոչինչ, որ դրանք չափսի, ոճի անհամապատասխանություն ունեն, փոխարենը կա հաճելի ինքնախաբկանքը, թե իրենք հասունացել ու նկատելի լինելու այլ ուղիներ են տեղափոխվել:

Նմանատիպ ինքնախաբկանք կա նաեւ հայաստանյան գովազդային շուկայում, որտեղ գովազդատուն առաջնորդվում է «որքան շատ ու հաճախ, այնքան լավ» սկզբունքով, բայց ոչ ասելիքի հասցեագրման ճշգրտությամբ: Եվ գովազդատուն քանիներ չի խնայում սեփական արտադրատեսակի կամ ծառայության գովազդը տեղադրելու հենց PRIME TIME-ում, առանց հավի առնելու, որ, ասենք, լվացքի փոշու կամ սպասքի լվացման նյութերի տեսակով հետաքրքրվողն այդ ժամին չէ, որ նաեւ հեռուստադիտող է: Հետեւաբար, այդ սկզբունքով PRIME TIME-ում գովազդ տեղադրելը լավագույն դեպքում դատարկ կրակոց է, իսկ ավելի ճիշտ՝ հակառակ ազդեցության հիմք, ինչը, վստահաբար, շահեկան չէ գովազդատուի համար, ավելին՝ ֆինանսական կորուստ է պատճառում: Մինչդեռ գովազդի շուկայում խելամիտ վարվելու, ֆինանսական կորուստներից խուսափելու եւ շահույթն ավելացնելու հնարավորություն կա, անգամ կա այդ հարցում պրոֆեսիոնալ ծառայություն մատուցող կազմակերպություն Հայաստանում, անվանումն էլ՝ «TV MR AM» ընկերություն: Միջազգային «AGB Nielsen MR» ընկերության պատշաճական ներկայացուցիչն է Հայաստանում: Որպես հեռուստա եւ ռադիոընթերցումների գովազդատուներից հոգնած հայաստանաբնակ՝ փորձեցինք «TV MR AM»-ի գործադիր տնօրեն Խորեն Բեգլարյանից պարզել, թե ո՞ւմ հետ եւ ինչպե՞ս է աշխատում ընկերությունը:

- Ո՞րն է ձեր ղեկավարած ընկերության գործունեության նպատակը:

- Ամերիկացի մի գործարար՝ Ջոն Վանդերմեյկերը մի հակիրճ ու դիպուկ խոսք է ասել. «Լավ գիտեմ, որ իմ գովազդային գումարների կեսը զուր է ծախսվում, բայց թե որ կեսը՝ անհայտ է»: Կարելի է ասել՝ մենք հենց այդ անհայտն ենք պարզում: Նպատակը հեռուստատեսային, գովազդային շուկան զարգացնելն ու հեռուստաալիքների վարկանիշի բարձրացումն է: Իսկ դա նշանակում է, որ օգնում ենք ճշգրտելու ոչ միայն գովազդների, այլեւ՝ ողջ հեռուստաեթերի որակն ու արդյունավետությունը:

- Եվ որո՞նք են այն մեթոդներն ու գործիքները, որոնցով իրականացնում եք վերոնշյալ նպատակները:

- Եթե շատ պարզ ձեւով ասելու լինենք, ապա ողջ գործընթացն ունի հետեւյալ հաջորդականությունը՝ փիփլմեթր, ընտանիք, ընկերություն, հեռուստաընկերություն: Սակայն սա գործընթացի ամբողջական պատկերը չէ: Նախ տեղական հարցում է կատարվում, որով ձեւավորվում է ընտանիքների բոլոր տիպերը բնութագրող բազա, այնուհետեւ ընտրվում են մասնակից ընտանիքները, որոնց հեռուստացույցներին տեղադրվում է հեռակառավարման վահանակով փիփլմեթր կոչվող սարքը: Այն շուրջօրյա աշխատելու հնարավորություն ունի եւ արձանագրում է, թե օրվա ո՛ր ժամին ո՛ր հեռուստադիտողը ի՞նչ տեւողությամբ ո՛ր հեռուստաալիքի ո՛ր հաղորդաշարն է նայել: Տվյալներն ամենօրյա ռեժիմով վերլուծվում են ընկերության կողմից ու նույն ամենօրյա ռեժիմով տրամադրվում հեռուստաընկերություններին: Դիտարկումները կատարում ենք 4 տարեկանից բարձր բնակչության շրջանում:

- Եվ դա բավա՞կան է հեռուստատեսության եւ գովազդի շուկայի որակական փոփոխման համար:

- Ո՛չ, իհարկե, ոչ: Գործի հաջորդ մասն ադեն յուրաքանչյուր հեռուստաընկերության անելիքն է: Այդ նրանք, վերլուծելով մեր տրամադրած տվյալները, որոնցում սուբյեկտիվությունն ըստ էության գրեթե բացակայում է, որոշում են հաղորդաշարերի տեսակն ու ուղղվածությունը, հաղորդման, անգամ լրատվական ռեպորտաժի տեւողությունը: Այդ կերպ կարելի է կառավարել թե՛ հեռուստադիտողի քանակն ու որակը, թե՛ շահագրգռել գովազդատուին, քանի որ հետեւությամբ աղահովվում է գովազդի հասցեականությունը: Վերջինը նշանակում է գովազդը դարձնել սպասված, արդյունավետ: Մյուս կողմից էլ, յուրաքանչյուր գովազդատու, համաձայն տվյալների վերլուծության, կարող է ընտրել այն հեռուստաընկերությունը, որն առավել հասցեական, նպատակային կդարձնի գովազդը: Ճիշտ պլանավորելու դեպքում գովազդատուն հնարավորություն ունի ավելի փոքր գումար ծախսելով ավելի նպատակային աշխատել ու հասնել ցանկալի արդյունքի:

- Ձեզ՝ որպես կազմակերպության ղեկավարի եւ որպես հեռուստադիտողի, այդ իմաստով տեսանելի՞ է որոշակի փոփոխություն:

- Հիմնական փոփոխությունն այն է, որ մեր պատվիրատու հեռուստաընկերությունները տեսնում են հեռուստաեթերի թվային տվյալները, որ դրանք ամեն օր փոփոխվում են՝ աճ է զգացվում: Ընդհանուր հեռուստատեսային դաշտը աճում է: Այն հեռուստաալիքները, որոնք համագործակցում են մեզ հետ, արդեն երկու տարի ունեն աճող ռեյտինգ՝ վարկանիշ, որը տատանվում է, բայց կա երկու տարվա հաստատուն աճ: Տարբեր հեռուստաընկերությունների աճը տարբեր չափով է դրսեւորվում, բայց կա: Դա էլ բացատրվում է հեռուստաընկերությունների տարբեր «ֆաբային կարգերով»:

Կարելի է արձանագրել, որ «TV MR AM» ընկերությունն իր ծառայություններով բացառիկ հնարավորություն է ընձեռում հայաստանյան թե՛ հեռուստաընկերություններին, թե՛ գովազդատուներին համակարգված, իսկապես շահութաբեր գովազդ ունենալու՝ չձանձրացնելով գովազդախեղդ եղած հեռուստադիտողներիս:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Իմ գործընկերներից ոչ ոք 2008-ը ավելի ռիսկային չի համարում»

1-ին էջից

Ինչ վերաբերում է նախագահական ընտրություններին: Ինքնին պարզ է, որ որոշակի տագնապներ կան: Հասարակությունն ավելի շատ ժամանակ, ակտիվություն, ռեսուրսներ, ֆինանսական ծախսեր է կատարում քաղաքական գործընթացների վրա եւ վստահը կա, որ տնտեսության ու բիզնեսի աճման տեմպերը նվազեն: Ի՞նչ անենք, որ դա չլինի:

Բոլորս պետք է հասկանանք, որ քաղաքական պայքարը եւ տնտեսությունն ու բիզնեսը տարբեր հարթությունների վրա են, որ այլեւս գործարարը չպետք է մտածի, թե ո՞վ կգա իշխանության գլուխ եւ դա ի՞նչ հետեւանք կունենա իր բիզնես ծրագրերի եւ իր տնտեսության վրա: Ազատական եւ շուկայական տնտեսության ջատագովներ են քաղաքական դաշտում նախագահի հավակնորդ համարվող բոլոր հիմնական թեկնածուները: Եթե չպետք է փոխվեն երկրի տնտեսական զարգացման դոկտրինան, սկզբունքները եւ օրենսդրությունը, որը մոտեցված է եվրոպականին, ապա այդ դեպքում գործարարը տագնապելու լուրջ պատճառներ չպետք է ունենա: Եթե հասարակության մեջ չեն լինում քաղաքական ցնցումներ, զանգվածային գործադուլներ, անկարգություններ, անհնազանդություններ, որոնք գցում են երկրի վարկանիշը որպես կայուն երկրի, ապա չեմ կարծում, որ մեր հասարակությունն այս ընտրություններին նման վտանգի առաջ կանգնած լինի: Քանզի թե՛ քաղաքական ուժերը, թե՛ գործարարությունը հասկանում են իրենց դերն ու նշանակությունը: Այո, որոշակի վտանգ կա եւ դա մեզ պետք է սթիպի ավելի հմուտ, քաղաքակիրթ պայքար մղել, հարգել մեկը մյուսին, հանդուրժող լինել, այլակարծությունը հարգել, հասարակությունը չբեւեռացնել սեւի եւ սպիտակի: Այդ դեպքում նախընտրական գործընթացների ազդեցությունը տնտեսության վրա կլինի նվազագույն:

- Սակայն բացառված չեն այսպիսի զարգացումներ: Երբ իշխանություն է փոխվում, գործարարության այս խավը համարվում է արդեն նախկին դարձած իշխանությունների կողմնակից, եւ նրանց նկատմամբ կիրառվում են տնտեսական ճնշամիջոցներ: Նման մի բան հիմա կարծես թե կիրառվում է գործարարներից մեկի նկատմամբ, որը հայտարարել է նախկին նախագահին աջակցելու մասին:

- Բարդ հարց է: Լավ ասացիք՝ «կարծես թե»: Տվյալ դեպքի հրապարակային գնահատման համար անհրաժեշտ է լիարժեք եւ մանրամասն տիրապետել ամբողջ տեղեկատվությանը եւ փաստերի վերջնական իրավական գնահատականին: Գործարարների այն խավի համար, ովքեր աշխատում են օրինականության դաշտում, բարեխիղճ հարկատու են եւ հարգում են ազատ մրցակցության սկզբունքները, ովքեր չեն ձգտում օգտվել հովանավորչությունից, պետական այս կամ այն պատշաճության հետ սերտաճելուց, որպեսզի ունենան որոշակի արտոնություններ իրենց ոլորտում եւ սանձազերծեն արհեստական մրցակցային հնարավորություններ, էական չպետք է լինեն քաղաքական վերնախավի փոփոխությունները: Պարզապես Հայաստանում յուրաքանչյուր փոքրիկ կրպակի տիրոջից եւ արհեստագործից սկսած պատրանք են ստեղծում, որ իրենք ընտրական գործընթացների մեջ են: Գործարարության այն խավի համար, որը մեր միության անդամ է, ես չեմ տեսնում որեւէ վտանգ եւ հեռանկարային խոչընդոտ: Որքան այս հարցը ես քննարկել եմ իմ գործընկերների հետ, նրանցից ոչ ոք իր հեռանկարային ծրագրերում 2008-ը ավելի ռիսկային չի համարում, քան 2007, 2006 կամ 2005 թվականներն էր համարում: Գործարարների այն հատվածը, որը սովորել է աշխատել հովանավորչական ռեժիմով, երբ այդ կապը կտրվի, մտնելու է մրցակցային դաշտ ու այդ դեպքում նրա համար կենսական նշանակություն է ունենալու: Դրա համար ենք հաճախակի նշում արհեստական մենաշնորհների կամ առավելությունների վերացման անհրաժեշտության մասին, որն այդ մարդկանց բիզնեսը կաթվածահարման վտանգի տակ է դրել: Յուրաքանչյուրն իր բիզնեսի հասարակական կամ քաղաքական ակտիվության վարձատրությունն ինքն է ընտրում եւ ինքն էլ պետք է պատասխան տա դրա համար: Համաշխարհային եւ Հայաստանի փորձը ցույց է տալիս մի բան՝ եթե բիզնեսի հիմքում դնում ես առողջ մրցակցությունը, ապա դու անպարտելի ես ամեն պարագայում, իսկ եթե բիզնեսի հիմքում դնում ես արտոնություններ ստանալով արագ կապիտալի կուտակումը, ուրեմն դու ռիսկայնության ես դիմում:

- Իսկ Հայաստանի մրցակցային դաշտը որքանո՞վ է առողջ Ձեր կարծիքով:

- Մենք հստակ նշում ենք, որ Հայաստանում ռազմավարական խնդիր է հովանավորչության եւ կոռուպցիայի դեմ պայքարը, որ արհեստական գերիշխող դիրք ունեցող կառույցները մեր տնտեսության զարգացման «ֆիլլեսյան գարշապարն են»: Թե ո՞ր ոլորտներում եւ ի՞նչ չափով են առկա այս երեւույթները, հավակներով կարելի է իմանալ: Դրան զուգահեռ ունենք ապրանքային շուկաներ, որտեղ ահավոր ակտիվ մրցակցություն կա: Նույնիսկ ներկրվող մթերային ապրանքների ոլորտում, որտեղ հաճախ շահարկվում է այս կամ այն գործարարի անունը, երբ իրական պատկերն ուսումնասիրում ես, տեսնում ես, որ բացի այդ գործարարի ներմուծածից, ներմուծման մնացած ծավալների համար 50-60 ընկերություն կռիվ են տալիս: Վերջերս հանդիպել էինք ռուսական արտահանողների պատվիրակության հետ, որոնք զարմացել էին, որ այսպիսի փոքր շուկայի եւ փոքր քանակի ապրանքների ներկրման առկայությամբ, ինչպես ենք փող աշխատում: Իմ գործընկերներից գործարարների գիտեմ, որոնք սկսելով մեկ կամ երկու կոնտեյներ ներկրելուց, տարիների ընթացքում դարձել են խոշոր ներկրողներ: Իսկ եղած արհեստական մենաշնորհներն էլ այսպիսի սահմանափակ սպառում ունեցող երկրի համար պատմական օրինաչափություն են, որից պետք է շատ արագ ազատվել: Իմ կարծիքով, հովանավորչական ռեժիմով աշխատող գործարարներից շատերը հասկանում են, որ նման գործունեության վերջը եկել է: Նախ՝ նրանց հետեւից արդեն գալիս են մրցակցողները, երկրորդ՝ այդ վիճակում աշխատելով միշտ վախը ուրտումդ է, որ մի օր հարկահանության մամլիչով կսանեն այդ ամենը: Ինչպես այսօր ես տեսնում եմ, հարկային վարչարարության այս խստացումը, որ սկսվել է, տարածվում է գրեթե բոլորի վրա: Սա էլ քաղաքական համարձակություն էր այս փուլում, այլ ոչ թե, ենթադրենք, եկող տարվա գարնանից հետո նման քայլի գնալը: Ես հավատում եմ, որ իշխանությունների դրսեւորած այդ քաղաքական կամքը շարունակական է լինելու եւ 2008-2009 թվականներին ունենալու ենք որակապես այլ պատկեր: Այլապես 2,5 մլրդ դոլարանոց բյուջեն, որքան էլ սրանից հանենք դոլարի արժեզրկման տոկոսները, առանց հարկային մամլիչը հավասար բոլորի վրա տարածելու, հնարավոր չէ կատարել: Այն ռեսուրսը, որ կարելի է քամել միայն բարեխիղճ հարկատուներից, սահմանափակ է եւ սա գիտակցված է: Համենայն դեպս ես այդ հույսն ունեմ: Ժամանակը ցույց կտա դա իրականություն կդառնա, թե՞ ոչ:

- Այդուհանդերձ, վերադառնալով նախընտրական տրամադրություններին, նշենք, որ բիզնեսում կան որոշակի սպասողական տրամադրություններ: Օրինակ, այսօր ամենաբուռն զարգացում ապրող շինարարության ոլորտում գործող ընկերություններից շատերը, իմ ունեցած տեղեկություններով, մինչ նախագահական ընտրությունների ավարտը նոր շինարարություն չեն սկսում:

- Որոշակի սպասողականությունն այն ոլորտներում, որոնք կապված են անմիջապես պետության գործառույթների հետ՝ հողահատկացումներ, խոշոր շինարարական ծրագրեր եւ ընդհանրապես խոշոր ներդրումներ ինչ-որ ոլորտում, բնական է, պետք է լինեն: Ամեն մի երկրում նախագահական ընտրություններն ամենալուրջ քաղաքական գործընթացներն են: Բացի այդ, մեր աչքի առջեւ են հարեւան երկրներում՝ Ուկրաինայում կամ Վրաստանում տեղի ունեցող գործընթացները: Ուկրաինայում 5-րդ տարին է տնտեսությունը անկում է ապրում եւ այնտեղից եկող ապրանքների, օրինակ՝ ձեթի, թանկացումն օբյեկտիվ է: Վանաձորի քիմքրոմի համար այդ երկրից բերվող հումքը յուրաքանչյուր ամիս 15-20 դոլար թանկանում է կապված երկրի անկայունության վիճակի հետ: Այսինքն, օբյեկտիվ է, որ երկարաժամկետ ներդրումային ծրագրերում որոշակի սպասողական ռեժիմ պետք է լինի:

- Այսինքն, եթե ամփոփենք, կարո՞ղ ենք ասել, որ գործարարների մեջ առաջիկա նախագահական ընտրությունների կապակցությամբ լուրջ մտահոգություններ չկան, բայց կան որոշակի սպասողական տրամադրություններ:

- Ինչպես ամբողջ հասարակության մեջ: Եթե չլինեին այդ տրամադրությունները, ապա դա կնշանակեր, որ այդ ընտրությունները ոչ թե ընտրություններ են, այլ իշխանության արհեստական վերարտադրություն: Հասարակության մեջ, որ ունի ժողովրդավարական զարգացման ցանկություն եւ ուղղվածություն, այդ տրամադրությունները պետք է լինեն:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

30 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ԷՋ Ա

ՎԱՂ ՀԱՎԵԼՎԱԾ Մանկապատանեկան

unicef

Ողջույն

Ինչպե՞ս եք: Եթե թերթ եք կարդում, երեւի լավ եք: Մենք էլ ենք լավ, քանի որ ոգեւորված ենք եւ եռանդով լի: Արդեն չորրորդ անգամ ձեր ուշադրությանն ենք հանձնում մեր աշխատանքները: Մենք լավ նորություններ ունենք հայտնելու: Դրանց կողքին նաեւ մտահոգություններով ու մանկական հարցականներով հրապարակումներ կան: Հավանաբար, դուք էլ մեզ հետ կուրախանաք լավի եւ կմտահոգվեք վատի համար ու կփորձեք լուծել դրանք՝ յուրաքանչյուրդ իր հնարավորությունների չափով: Ուրեմն, բարի եւ գործնականության մղող ընթերցում:

Սիրով՝ «Մանկապատանեկան ազգ»-ականներ

Մեկի եղանակի երերում

Հոկտեմբերի 30-ին մենք հյուրընկալվեցինք «Հ1» հեռուսաընկերության «Առաջին ծրագրին»: Թեոդոս մեզնից միայն երեքն էին հրավիրված, ուրախ ու ոգեւորված էինք բոլորս: Մենք՝ Անի Գյոզալյանը եւ Աննա Գեւորգյանը, մեր ուսուցչուհի Սուսաննա Մարգարյանի հետ, արժանացանք բարեկամական ընդունելության Հանրային հեռուսաընկերությունում: «Առաջին ծրագրի» հաղորդավար Մեսրոպ Առաքելյանը հարցեր ուղղեց դասընթացի, մեզ հուզող հարցերի եւ մեր ծրագրերի մասին: Թեոդոս առաջին անգամ էինք հանդիպում, սակայն զրույցն անցավ ջերմ եւ անմիջական մթնոլորտում:

Նույն շաբաթ մեզ հյուրընկալվեց պարոն Մ. Առաքելյանը, եւ մեր ուսուցչուհու խնդրանքով հատուկ դաս անցկացրեց: Այն ընթացավ անկեղծ ու ընկերական մթնոլորտում: Պարոն Առաքելյանը պատմեց իր անցած ափխասանքային ուղու մասին: «Ես մասնագիտությամբ ինժեներ եմ եւ մրցավար», պատմեց մեր հյուրը: Մենք հետաքրքրվեցինք, թե ինչպես է պարոն Առաքելյանը վերաբերվում 32 աստմ ակումբի էխո-Մխոյին, որ նմանակում է իրեն: Մեր հյուրը նշեց, որ ինքը բացարձակապես չի վիրավորվում եւ գտնում է, որ տաղանդավոր է այն երիտասարդն, ում հաջողվում է կրկնօրինակում անել:

Պարոն Առաքելյանը խոսեց նաեւ այն հեռուստատեսային ծրագրերի մասին, որոնք իրեն դուր չեն գալիս: Մեզ հետաքրքրում էր նաեւ մեր հյուրի վերաբերմունքը ԱԼՄ հեռուսաընկերության նկատմամբ: Նա այս կապակցությամբ ասաց, որ ԱԼՄ-ն ցույց է տալիս, թե ինչ չի կարելի անել հեռուստատեսությամբ: Մամուլի համար անուններ չտալով հանդերձ, նա նշեց, որ հեռուստատեսային ծրագրերը պետք է տեղեկատվական, դաստիարակչական նշանակություն ունենան:

Մեր այն հարցին, թե ինչու են Հանրայինի եթերում բազմաթիվ սերիալներ ցուցադրվում, մեր հյուրը պատասխանեց, որ ժողովրդի շրջանում մեծ է սերիալների պահանջարկը: «Եթե ցուցադրում ենք որակյալ ֆիլմեր, ինչպես, օրինակ, «Մարգարտե ականջօղով աղջիկը», ապա հեռուստադիտողների 5-10%-ն է նայում»,- նշեց պարոն Առաքելյանը:

Հատուկ դասի ավարտից հետո մենք նշեցինք մեր սիրելի դասընկերուհու՝ Տաթեւիկ Բաղալյանի 16-ամյակը: Պարոն Առաքելյանը սիրով մասնակցեց մեր հյուրասիրությանը եւ մաղթանքներ հղեց հոբելյարին: Հանդիպման վերջում մեր հյուրը նշեց, որ թեեւ ինքներս էլ չնկատեցինք, բայց ինքը մեզանից շատ բան սովորեց: Բոլորս գոհ էինք եւ ուրախ:

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ, 15s.
ԱՆԻ ԳՅՈԶԱԼՅԱՆ, 16 s.

«Արեւիկը» եվրատեսիլի կներկայացնի սեփական հեղինակության երգը

Արդեն տեղյակ եք, որ դեկտեմբերի 8-ին Նիդերլանդների մայրաքաղաք Ռոտերդամում «Եվրատեսիլ» երգի մանկապատանեկան մրցույթին մեր երկիրը կներկայացնի «Արեւիկ» մանկապատանեկան համույթն իր «Երազանք» վերնագրված երգով: 13-ամյա Սարգիս Մզիկյանի բանաստեղծությամբ եւ 15-ամյա Մարիաննա Ջավախյանի երաժշտությամբ կառուցված սիրուն լոանին, աստղերին ու երազանքների բարի փերուն նվիրված երգն արդեն դարձել է հայ դպրոցահասակ երեխաների, ինչպես նաեւ շատ մեծահասակների սիրելի հիթը (նույնիսկ հեռախոսազանգը), որը հուսով ենք, հաջողություն պիտի բերի մեր հայրենակիցներին: Ինչպես տեղեկացնում է **www.haylife.ru** կայքէջը, «Արեւիկը» համերգից մի քանի օր անց՝ դեկտեմբերի 16-ին հանդես կգա մեծ համերգային ծրագրով Հայաստանում, որին կմասնակցեն նաեւ հայկական շոու-բիզնեսի ներկայացուցիչները: Իսկ արդեն 2008-ին «Արեւիկը» կտոնի իր ստեղծման հոբելյանական 30-ամյակը:

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ, 15 s.

«ԵՐԱԼԱՔ»-Ի ԵԿԱՎ ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերի վերջին երեւանցիներին հյուր էր եկել «Երալաք» մանրապատումային հեռուստաշարքի «հայրը»՝ պարոն Բորիս Գրաչեւսկին: Նա դասարկաձեռն չէր եւ մեզ նվեր էր բերել «Երալաքի» նոր մանրապատումները, որոնք առաջին անգամ հայաստանյան հանդիսատեսի համար ցուցադրվեցին Երեւանում գտնվող Մոսկվայի տանը: Հանդիպումը հումորի եւ հնարագիտության վարպետ ռեժիսորի հետ անցավ ուրախ եւ հետաքրքրական մթնոլորտում: Պարոն Գրաչեւսկին իր հետ հանդիպման եկած պատանիներին հարցեր տվեց, սուլգելու, արդյոք նրանք լավ են հիշում «Երալաքի» մանրապատումների անվանումներն ու մանրամասները: Հաղթողները հուշանվեր ստացան՝ փոքրիկ օրացույցներ: Ողջ երեկոյի ընթացքում բոլորի դեմքին միայն ուրախություն ու ժպիտ է փայլում:

Ա. Ա., 14 s.

Բուֆետաբանական հաշվարկ

Դպրոցական ընդմիջման համար կարող եք օգտվել հետեւյալ տարբերակներից.

150 դրամ =1 հատ բուլկի +1 հատ խաչապուրի +1 հատ կոնֆետ:

200 դրամ = 1 հատ շոկոլադ + 2 հատ կոնֆետ = 1 հատ սնիկերս:

Իսկ ավելի ճոխ, այսինքն՝

500 դրամ = 2 հատ կոկա-կոլա+1 հատ սնիկերս + 5 հատ կոնֆետ:

Հարցումների ընթացքում պարզեցի, որ դպրոցական երեխաներն օրական ծախսում են 150-200 դրամ, իսկ տոնական օրերին՝ 500 դրամ, եթե ոչ ավելի: Առաջին հայացքից թվում է, թե 150, 200, 250 դրամն այնքան էլ շատ չէ: Բայց եթե հաշվենք, որ մենք սովորում ենք 10 տարի, եւ ուսումնական 1 տարին 9 ամիս է, 9 ուսումնական ամիսը 234 օր, ապա 10 տարվա 9 ամիսը 2340 օր: Այս օրերին ծախսվող միջինը 200 դրամը 10 տարվա համար կազմում է 468 000 դրամ: Ստացվում է, որ մենք դպրոցի բուֆետում 10 տարում թողնում ենք մոտ կես միլիոն դրամ: Այդքան փողով կարելի էր գնել մեկ ՕՀ մակնիշի ավտոմեքենա, կամ էլ վճարել բուհի մեկ տարվա ուսումնական վարձավճարը:

ԱՆԻ ԱԼԻԽԱՆՅԱՆ, 14 s.

ԱՄԵՆԱՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏԻՆ

Ֆիլմն ընդհատվում է

Ցերեկային ժամերին հաճախ այնպիսի ֆիլմեր են ցուցադրվում, որոնք կարելի է եթեր հեռարձակել միայն կեսգիշերն անց: Զարմանալին այն է, որ թեեւ էրոտիկ տեսարաններով ֆիլմեր ցուցադրվում են, սակայն ամենահետաքրքիր պահին ֆիլմն ընդհատվում է գովազդային ընդմիջումներով: Տասներեքամյա Արմենն ասում է. «Նայում ես ֆիլմը, եւ երբ աղջիկն արդեն հանում է զգեստը, մերկանում, ֆիլմն ընդհատվում է: Հարց է ծագում՝ եթե այդքան համարձակորեն ցուցադրում են նման ֆիլմեր, ապա ինչու՞ թույլ չեն տալիս, որ դեռահասների հետաքրքրությունը լիովին բավարարվի, եւ ֆիլմն ընդհատում են ամենաստասված պահին»:

Ա. Գ., 15 s.

Թունավոր խաղալիքներ

Հաճելի է դիտել մանկիկին, որ խաղում է խաղալիքով ու չի էլ պատկերացնում, որ այն անշունչ է: Հատկապես անհատամ ծնողները սիրում են խաղալիքը տանել բերանը եւ լնդերով կրծոտել դրանք: Սակայն երբեմն այդ անմեղ խաղը տխուր վերջ է ունենում: Խանութներում վաճառվում են գեղեցիկ, վառագույն փղիկներ, գորշ արջուկներ ու այլ գազանիկներ, որոնք չնայած հաճելի տեսքին, կարող են թունավոր գունանյութերով ներկված լինել: Վտանգավոր են համարվում հատկապես չինական խաղալիքները:

Վերջերս թունավորվել էր մի երեխայ երեխա: Բժիշկները պարզել են, որ նրա թունավորման պատճառը խաղալիքի թունավոր գունանյութն է: Նման փորձանքներից խուսափելու համար բժիշկները խորհուրդ են տալիս անհատամ երեխաների համար խաղալիքները գնել դեղատներից՝ անպայման ստուգելով պիտակը: Այնտեղ պետք է գտնել խաղալիքի էկոլոգիապես մաքուր լինելու տարբերանշանը: Նույն նշանը պետք է փնտրել ավելի մեծ երեխաների համար գնվող խաղալիքի պիտակի վրա: Ճիշտ է, էկոլոգիապես մաքուր խաղալիքները թանկ են, բայց մի՞թե կարելի է երեխայի առողջությունը փոխել մի քանի հազար դրամի հետ:

ԱՆԻ ՉԱՔԱՐՅԱՆ, 12 s.

Շնորհակալություն

Արդեն չորրորդ անգամ «Մանկապատանեկան Ազգ» ներդիրի նկարազարդումներին իր մասնակցությունն է բերում **«Ազգի»** աշխատակցուհի **Սոնա Հովհաննիսյանը**: Մենք շնորհակալություն ենք հայտնում Սոնային, ինչպես նաեւ հաշվապահ **Արեւիկ Սարգսյանին** անշահախնդիր աջակցության համար: Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաեւ մեր մյուս բարեկամներին՝ **Աննա Կարապետյանին**, Ճարտարապետների միության նկարչական ստուդիայի նկարչության դասատու **Իգոր Հովսեփյանին**, Արմեն եւ Արփինե Դերոյանների մայրիկին՝ տիկին **Սաթենիկ Չիրեկյանցին** եւ բոլոր նրանց, ովքեր օգնում են, որ մենք կայանանք մանկապատանեկան լրագրության դաշտում՝ որպես մասնագետներ եւ ամուր հենարան ունեցող խմբագրություն: Ձեր ջանքերը չեն մոռացվի:

«Մանկապատանեկան ազգ»-ականներ

ԲԱՐՔԵՐ

Պատարագ
առանց Սուրբ գրքի

Նոյեմբերի 7-ին գողացել են Արմավիրի մարզի Փարաֆար գյուղի Սբ. Հարություն եկեղեցու Աստվածաշունչը: Եկեղեցու սպասավորներից մեկն ասում է. «Կարծում եմ, որ գողերը տեղացի են, քանի որ Աստվածաշունչը վաճառելու դեպքում, նրանք դրամական մեծ եկամուտ չէին ստանա: Գողացել են ինչ-որ մեկի առողջության համար: Հուսով ենք, որ այն շուտով կվերադարձնեն»: Այսպես, թե այնպես, արդեն երկու կիրակի Սբ. Հարություն եկեղեցում պատարագը կատարվում է առանց Սուրբ գրքի:

Հ. Թ., 16 տ.

Ծխելու վարժանքն



Քաղաքակիրթ երկրներում ծխողների թիվը գնալով պակասում է, սակայն Հայաստանում հակառակը՝ ավելանում է: Մի վիճակագրության համաձայն, որ կարդացի «Էթիկետի հիմունքներ» գրքում (հեղ.՝ Անի Նազարյան, Հրաչյա Գրիգորյան), Հայաստանում ծխում է չափահաս բնակչության (անկախ սեռից) 50 տոկոսը: Բոլորն էլ գիտեն, որ ծխելը վնասակար է առողջությանը, եւ ինչքան էլ ծխողները չեն ցանկանում հրաժարվել այդ վնասակար սովորությունից, այնուամենայնիվ, պետք է հիշեն, որ վտանգում են նաեւ շրջապատի մարդկանց առողջությունը: Բոլոր ծխողները նախքան ծխելը պետք է թույլտվություն ստանան մյուս մարդկանցից, սակայն հայերը դա հաշվի չեն առնում եւ ծխում են՝ ուշադրություն չդարձնելով, որ թունավորում են մյուսներին: Եթե ռեստորանում կամ սրճարանում մոխրաման դրված չէ, ուրեմն այդտեղ չի կարելի ծխել, պետք չէ մոխիրը ո՛չ սուրճի ափսեի եւ ո՛չ ծխախոտի տուփի մեջ լցնել (մինչդեռ հայերը այս ոլորտում նույնպես կատարելագործվել են, ծխախոտի մոխիրը լցնում են որեւէ խմիչքի կամ հյութի կափարիչի մեջ):

Հարգի չէ որեւէ հաստատություն մտնել վառվող ծխախոտը ձեռքին (մինչդեռ, երբ դուռը բացում ես միայն ծխախոտն ու ծուխն ես տեսնում, հետո նոր միայն այցելուին):

Եվ վերջապես, ահա ոչ թե քաղաքավարի վարվելու, այլ բարոյական ու մարդկային խորհուրդ: Սիրելի ծխողներ, հատկապես ծխող վարորդներ, մեքենայի ապակուն մի փակցրեք «Պահանջեք վարորդից չծխել...» ցուցանակը եւ ծխեք, այլ ավելի լավ է դա էլ մի փակցրեք, որպեսզի ուղեւորների բարկությունը ավելի չսաստկանա:

ԱՆԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ, 10 տ.

Բամբասանքի

«Բամբաս»՝ այսինքն, ես ասեմ, դու ասես: Այսօր «ես ասեմ, դու ասես»-ը վերածվել է. «Աղչի, սպասի ես ասեմ, դու մենակ լսի, կմեռնես»-ի: Բայց թե ինչու եւ ինչից է ծնվում բամբասանքը, փորձեցին բացատրել մի խումբ պատանիներ եւ մեծահասակներ: Տիկին Անահիտն ասաց. «Ցիմացած բանին լուծում տալու ամենահեշտ տարբերակը բամբասանքն է»: Իսկ 16-ամյա Մարինեն գտնում է, որ մարդիկ բամբասում են նախանձից դրդված, չեն ուզում ուրախանալ դիմացինի հաջողություններով եւ իրենց մյուսներից բարձր են դասում: 15-ամյա Բորիսն էլ ավելացնում է. «Դե մենք, տղաներով հավաքվում ենք, հավեսի համար դեսից-դենից բամբասում, բայց դե մեր բամբասանքների հիմնական մասն աղջիկներն են, էլ փակագծերը չբացեմ»:

Իսկ ես ասեմ, որ աշխարհի մասշտաբով արված մի վիճակագրության տվյալների համաձայն, ի զարմանս ձեզ, ավելի շատ բամբասում են ուժեղ սեռի ներկայացուցիչները:

Ա. Գ., 16 տ.

Դժվար մանկություն

Ցողի հեգնանքը

Լուսանկարը՝ ԱՆԻ ԳՅՈՉԱԼՅԱՆԻ

Տասնհինգամյա Մարինեն ապրում է Երեւանում: Ճիշտ է, մեր հերոսուհին սովորելու նկատմամբ հակում չունի, սակայն դա փոխարեն հետաքրքրվում է արվեստով: Մարինեն պատմում է, որ դեռ մանկուց է սիրել նկարչությունը, դիզայնը, պարը: 13 տարեկանում հաճախել է նկարչության դասերի, այնուհետեւ՝ պարի: Դրամական միջոցներ չունենալու պատճառով ստիպված եղավ հրաժարվել իր սիրած զբաղմունքներից: Այնուհետեւ փորձել է ընդունվել Փ. Թեղեմեզյանի անվան ուսումնարան: Սակայն ընդունելության համար հարկավոր էր պարապել ննկական առարկաները՝ յուրաքանչյուրը ամսական 25 հազար դրամով: «Հայրս Մոսկվայում է, իսկ մայրս մշտական աշխատանք չունի, դրանից ելնելով, չեմ կարող իմ պահանջները թելադրել: Չէ՞ որ ունեմ մեծ քույր, որի ուսման վարձն է հարկավոր վճարել, փոքրիկ եղբայրներ, որոնց մեծացնել է պետք», տխրությամբ ասում է Մարինեն: Այժմ Մարինեն տնային պայմաններում կավից գեղեցիկ կոմպոզիցիաներ է պատրաստում՝ վաճառելու համար: Վաճառից հավաքած գումարով ցանկանում է ընդունվել ուսումնական հաստատություն եւ կատարելագործել իր հմտությունները: «Չգիտեմ, թե որքանով իմ նախաձեռնությունն իրականություն կդառնա, այնուամենայնիվ, հուսով եմ, որ հետագա կյանքիս ընթացքում, դրամ չունենալն իմ սիրած աշխատանքով զբաղվելու համար այլեւս արգելք չի լինի», երազկոտ աչքերով ավելացնում է Մարինեն:

Ցավոք, Մարինեն եզակի երեւույթ չէ: Աշխարհում Մարինեի նման շատ երեխաներ կան, որոնք ինչ-ինչ պատճառներով զրկված են լիարժեք ապրելու հաճույքից:

ԱՆԻ ԳՅՈՉԱԼՅԱՆ, 16 տ.

Բարեգործություն Վրեժին

Անցյալ տարի Վրեժը սովորում էր 9-րդ դասարանում: Նա ունի երկու փոքր եղբայրներ: Քանի որ նրանց ծնողները մահացել են, երեխաներն ապրում են տատիկի եւ պապիկի հետ:

Արդեն տասներորդցի Վրեժը ուսման հետ մեկտեղ, ընտանիքը պահելու բեռն է կրում, որովհետեւ եղբայրները փոքր են եւ խնամքի կարիք ունեն, իսկ տատիկն ու պապիկը բավականին ծեր են եւ իրենք էլ խնամքի կարիք ունեն: Վրեժն անտառից փայտ է հավաքում, օջախ վառում, որպեսզի ջուր տաքացնեն, ճաշ պատրաստեն: Տնային գործերում էլ Վրեժն օգնում է տատիկին: Նա լավ գիտե պատմություն առարկան եւ երազում է դառնալ պատմաբան:

Դեռեւս 2007 թվականի սկզբին Երեւանի թիվ 27 դպրոցի տնօրեն տիկին Բախչյանը «Հայ Ջմեռ պապ» բարեգործական կազմակերպության հետ համագործակցելով, օգնեց Վրեժի ընտանիքին: Հերթական ծնողական ժողովի ժամանակ ցուցադրվեց Վրեժի ընտանիքի մասին պատմող ֆիլմ, որից հետո տիկին Բախչյանի հորդորով ծնողները դրամահավաք կազմակերպեցին՝ Վրեժին աջակցելու համար: Դպրոցի 7Ա դասարանի երեխաներն էլ բեմադրեցին «Սուրբ ծննդյան երգը» ամանորյա ներկայացումը, որից ստացած 30 000 դրամ հասույթը փոխանցեցին Վրեժի օգնության ֆոնդին: Դպրոցում տեղադրված էր Վրեժի անունը կրող դրամական նվիրատվությունների արկղիկ: Բարեգործական ծրագրի երջանակներում հավաքված մոտ 150 հազար դրամն՝ արկղիկից եւ ներկայացման հասույթը, հագուստներ ու գրենական պիտույքներ, ինչպես նաեւ տիկին Բախչյանի անձնական լվացքի մեքենան մի խումբ աշակերտների, տիկին Բախչյանի եւ «Հայ Ջմեռ պապ» ծրագրի ղեկավարի միջոցով հանձնվեցին Վրեժի ընտանիքին: Վրեժին նվիրեցին նաեւ բջջային հեռախոս եւ խոստացան, որ կաջակցեն ուսումնառության հարցում նույնպես: Խոստումը չդժդելով Վրեժին օգնեցին պարապել կրկնուսույցների մոտ:

Հիմա Վրեժը հավատում է, որ կդառնա հայտնի պատմաբան եւ հպարտությամբ կպատմի իր ազգի պատմությունը:

ՀԱՅԿՈՒՀԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, 16 տ.

Ով հայրական եեթից չի լացել
նա ո՞րբ է մեծացել

Բազմաթիվ հայ մանուկների մանկությունն ու պատանեկությունն անցնում է ոչ թե անհոգ ու զվարթ, այլ լի վախով ու սարսափով: Վախ, որ նորից կծեծվեն, որ իրենց գլխին կթափվեն անտեղի մեղադրանքներն ու վիրավորանքները: Նման վերաբերմունքի հետեւանքով երեխաները ոչ միայն սարսափ ու տագնապ են ապրում, այլեւ հոգեկան շեղումներ են ունենում: Երեխան պետք է հասկանա, որ պաշտվում է իր վաս, սխալ արարքի համար, ոչ թե ծեծվում է պատեհ-անպատեհ առիթով:

Տիկին Սվետան, որն ուներ երկու որդի, հաճախ էր ծեծում իր զավակներին: Ամեն պատեհ, անպատեհ առիթով այնպիսի պատիժ էին ստանում տղաները, որ հետեւանքները դեռ երկար ժամանակ էին պահպանվում: Անընդհատ կապտուկներ ու սպիներ:

Երեք որդի ունեցող տիկին Հայկուհին էլ էր որդիների հետ նույն կերպ վարվում՝ ծեծում էր նույնիսկ ոտքին խողովակով:

Ծանոթներից մեկի մայրը նրան փոքր հասակում հաճախ էր ծեծում՝ չմտածելով աղջկա հոգեկան աշխարհի եւ ապագայի մասին: Աղջկա մեջքը հաճախ կարմրած էր լինում, եւ նա ինձ խոստովանում էր, որ մայրն է ծեծել: Հիմա նա այնպիսին է, ինչպիսին մայրը: Ամեն չնչին ու աննշան առիթով բարկանում է, զայրանում, գոռում: Նա ունի փոքր քույր, որի հետ վարվում է այնպես, ինչպես մայրն է իր հետ վարվել: Անընդհատ զայրանում է փոքրիկի վրա ու սաստում:

Հոգեբան Գոգա Հարությունյանը նշում է. «Երեխայի աշխարհաճանաչման տարիքում ծնողը նրա մեջ պետք է սերմանի գեղեցիկի նկատմամբ սեր, բարոյահոգեկան եւ ազգային բարձր արժեքներ: Ծնողներն իրենց ապրելակերպով, մտածելակերպով եւ վարքագծով օրինակ են երեխաների համար: Դրա համար էլ ճշմարիտ է, որ սեփական օրինակն է իսկական դաստիարակությունը, որը փոխանցվելու է սերնդեսերունդ՝ դառնալով ավանդական»:

Ուշագրավ է նաեւ պարոն Հարությունյանի հետեւյալ միտքը. «Քաղաքակրթության զարգացման բոլոր շրջափուլերում գերխնդիր է եղել հետեւյալ նպատակը՝ եթե ուզում ես ունենալ տաղանդավոր սերունդ, պատրաստի՛ր տաղանդավոր ծնողներ»:

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ, 15 տ.

Մեծերի ջանքերով մթնած մանկություն

Արեփկի համար մանկական ամենաազդեցիկ հիշողությունները տատիկ-պապիկի եւ ծնողների վեճերն են: Տատիկն ու պապիկը իրենց ծնողական օրինանքը տալու փոխարեն անիծում էին իրենց զավակներին: «Երբ նրանք վիճում էին, ես լաց էի լինում, որպեսզի շեղեմ նրանց ուշադրությունը: Դա չէր օգնում: Ես փակում էի աչքերս ու ականջներս եւ փորձում էի քնել, սակայն քունս չէր տանում: Ես շարունակում էի լաց լինել արդեն բարձրաձայն բղավելով», հիշում է Արեփկը: Նրա կյանքն անցնում էր ահ ու դողի մեջ: Իր կոտրած իրերն Արեփկը թաքցնում էր, որ դրանք նոր վեճի առիթ չդառնան:

Առժամանակ անց Արեփկի հայրը ձեւեր է գտնում, որ վեճի առարկա հարցերը լուծվեն խաղաղ ճանապարհով: Հայրիկի նախաձեռնությունը հաջողվում է, վեճերը էլանում են, սակայն Արեփկն այլեւս չի կարողանում քնել, անընդհատ լաց է լինում, ականջներում բղավոց է լսում: Արեփկի ծնողները տանում են նրան հոգեբանի մոտ, ում շնորհիվ Արեփկը կարողանում է հաղթահարել վախի զգացումը:

Արեփկն արդեն տասնվեց տարեկան է: Փոքր տարիքում իր հետ կատարված դեպքերը լավ է հիշում եւ իր մանկությունն անվանում «դաժան»: Այդ դառն ու դաժան մանկության պատճառով Արեփկը որոշել է դառնալ հոգեբան եւ օգնել բոլոր այն մանուկներին, ովքեր հայտնվել են նման իրավիճակում:

Հ. Թ., (16 տ.)

Մի տղայի պատմությունը

«Ես ծնողներիս հետ հարաբերություններ չունեմ ու չեմ էլ ուզում ունենալ,- ասում է 15-ամյա Մերուժանը: - Հիմա ես ապրում եմ տատիկիս տանը եւ կարելի է ասել, տատիկիս զավակն եմ դարձել: Տնից հեռացել եմ երկու տարի առաջ, որովհետեւ գժտվեցինք ծնողներիս հետ: Թողեցի ու հեռացա: Մի օր երբ նեղտաած քայլում էի քաղաքում, մտածելով, թե այս գիշեր որտեղ եմ անցկացնելու, տեսա մի կնոջ, որը փողով լի դրամապանակը դրեց պայուսակի մեջ եւ շարունակեց քայլել: Ես միանգամից վրա պրծա, հափշտակեցի պայուսակը եւ փախա: Սակայն չէի հասցրել ուրախանալ, երբ մի ոստիկան ձեռքը դրեց ուսիս: Ինձ տարան ոստիկանություն: Երբ ծնողներս եկան, ես նրանց հետ չխոսեցի: Հետո զանգեցի տատիկիս, որն էլ տուգանք վճարելով ինձ ազատեց: Այդ օրվանից ծնողներս գիտեն, որ ես ապրում եմ տատիկիս տանը եւ կարծես մոռացել են իմ մասին: Տատիկիս հետ էլ ընդհանրապես չեն խոսում:

Ես հասկանում եմ, որ սխալ եմ գործել, սակայն չեմ ցանկանում, որ իմ սխալի պատճառով տուժի տատիկս, իր կյանքի վերջին տարիներն անցկացնելով միայն թոռան սիրո վրա հենված», վերջացրեց Մերուժանը:

ՄԿՐՏԻՉ ԳՅՈՉԱԼՅԱՆ, 15 տ.

Մանկությունս մեկս մեր

unicef

Վիրտուալ ծանոթություններ

«Ցանկանո՞ւմ ես ձեռք բերել ընկերներ: Ոտքակիր կարճ հաղորդագրություն ... համարին»: Ամեն օր թե՛ հեռուստատեսությունը, թե՛ ռադիոն գովազդում են այդպիսի ծառայություններ, որոնցից շատերն են օգտվում: Սակայն վիրտուալ ծանոթություններով տարված դեռահասներն ավելի հաճախ նախընտրում են ինտերնետային չատը: Չատն անգլերեն բառ է, որ թարգմանաբար նշանակում է շատախոսել: 16-ամյա Հայկի համար չատն ոտղակի ժամանցի մի ձև է եւ ոչ լուրջ զբաղմունք, քանի որ 14 տարեկանները սեղնաբարի մի քանի թեթեւ հարվածներով դառնում են 17, սեաՀերները՝ շիկահեր եւ այլն: Ի դեպ, Հայկն այս անլուրջ զբաղմունքի համար ծախսում է ամսական 5000 դրամ եւ ավելի: Չատով տարված դեռահասներից շատերը խոստովանեցին, որ ձանձրույթն է նրանց դրդում իրենց ժամանակը ծախսել այդ զբաղմունքի վրա: Հոգեբանները գտնում են, որ այս կերպ շփվել նախընտրում են հիմնականում անհնավանաբար դասընկերոտիհներին դիտել՝դրանք: Շատերի հեռախոսներում նման նկարների կողքին կարելի է տեսնել Հիսուս Քրիստոսի, սրբերի պատկերները:

Եթե անգամ տղաների հետաքրքրությունն այս ամենի նկատմամբ որոշ չափով հասկանալի համարենք, ապա աղջիկների հետաքրքրասիրությունը նման բաների նկատմամբ իսկապես անընդունելի է: Տասնչորսամյա Անահիտը պատմում է, որ իր դասընկերոտիհներից ոմանք բջջայիններում ունեն ոչ պակաս էրոտիկ նկարներ, քան տղաները: Եվ նման աղջիկները այդօրինակ նկարների առկայությունն իրենց հեռախոսներում ոչ թե թաքցնում են, այլ բացեիբաց առաջարկում համադասարանցիներին դիտելու:

Ծնողներից շատերն անտեղյակ են այս ամենին, իսկ այն ուսուցիչները, ովքեր նկատում են նման երեւույթները, անտարբեր են ձեւանում ու անուշադրության մատնում:

Իսկ մենք՝ քսանմեկերորդ դարի պատանիներս ու «հայ ժողովրդի աղագան», ինչ ուզում, այն էլ անում ենք դպրոցում:

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ, 15 տ.

Համակարգիչն ու մարդը

Քսանմեկերորդ դարի մեծագույն նվաճում համակարգիչը հաստատուն քայլերով մտել է յուրաքանչյուրի կենցաղ, դարձել մարդկության մեծ մասի անբաժան ընկերը: Սակայն բացի հավատարիմ բարեկամ լինելուց, այն նաեւ հիվանդությունների անխնա հարուցիչ է: Բժիշկները հաստատում են, որ համակարգչի առջեւ ժամերով նստելուց հետո ճառագայթվում են աչքերը, չձեւավորված օրգանիզմներում երեւան են գալիս անցանկալի երեւույթներ: Համակարգչից օգտվող դեռահաս տղաներն ու աղջիկները սկսում են կամաց-կամաց մեկուսանալ շրջապատից՝ պարփակվելով իրենք իրենց մեջ: Ասում են, որ համակարգչային կախվածություն ունեցող տղաների մոտ առաջանում է իմպոտենտություն: Համակարգչով երկար չզբաղվելու ծնողների բազում հորդորներն ապարդյուն են: Օրինակ, 15-ամյա Վահեն ասում է, որ համակարգչի առջեւ կարող է ժամերով նստել եւ չհոգնել, քանի որ այն տեղեկատվություն ստանալու, երգեր լսելու, խաղեր խաղալու եւ վերջապես ինտերնետում թափառելու հիանալի միջոց է: Սակայն 18-ամյա Կարապետը համակարգչի հնարքների նկատմամբ բացասաբար է տրամադրված, ասելով, որ երկու-երեք տարի աշխատելով, վնասել է տեսողությունը եւ այժմ ակնոց պիտի կրի: Համակարգչի դրական եւ բացասական կողմերի մասին բազմակարծություն է տիրում: Ուստի, դժվար է վերջնական եզրահանգման գալ նրա օգտակարության, կամ էլ վնասակարության հարցում:

ԱՆԻ ԳՅՈՉԱԼՅԱՆ, 16 տ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈԳՍԵՐ

Ինչ ուզում, այն էլ անում ենք

Կարծամանակ, երբ աշակերտները դպրոց էին գնում ուսում ստանալու ու գիտելիքներ ձեռք բերելու համար: Սակայն քսանմեկերորդ դարի աշակերտների մեծ մասը դպրոց է հաճախում զվարճանալու ու, ինչու չէ, անպատշաճ բաներով զբաղվելու համար:

Տասնչորսամյա Լուսինեն պատմում է, որ իր համադասարանցիները հենց դասարանում փոխանակում են էրոտիկ ֆիլմերի սկավառակներ, առանց աղջիկներից քաշվելու, իսկ հետո հրճվանքով փոխանակում են ֆիլմից ստացած տպավորությունները:

Բջջային հեռախոսները եւս լեցուն են անպատշաճ նկարներով: Միջին ու ավագ դպրոցի աշակերտներից շատերի հեռախոսներում կարելի է գտնել էրոտիկ նկարների մի ամբողջ շարք: Տասնհինգամյա Հերմինեն պատմում է, որ իր դասարանի բոլոր տղաների հեռախոսներում կան մերկ աղջիկների բազմաթիվ նկարներ, ու տղաներն անամոթաբար առաջարկում են

2-րդական հերթի դպրոցներ

Որոշ դպրոցներում 3 տարին գլորելուց հետո, երեխաները փոխադրվում են 4-րդ դասարան, եւ սկսվում են նրանց 2-րդ հերթի տանջանքները: Բարդանում են առարկաները եւ դրանց հետ մեկտեղ երեխաները տուն են գալիս ժամը 5-ին, կամ ավելի ուշ: Իսկ թիվ 132 դպրոցն ավելի է կատարելագործվել, 3-րդ հերթ էլ ունի, որը սկսվում է ժամը 2-ին եւ վերջանում 6-ին, դեռ 4-րդ հերթ էլ են ուզում նախատեսել: Երեխաները հասցնում են միայն դպրոցից տուն վերադառնալ, սովորել դասերը եւ քնել: Բայց կան այնպիսի երեխաներ, որոնք հաճախում են տարբեր խմբակներ, իսկ դասերի մասին մոռանում են: Իսկ ինչ անել, որ ե՛ւ դասերը հասցնեն, ե՛ւ հաճախեն որեւէ խմբակի: Տարբերակներն այսպիսին են.

1) չգնալ դպրոց այն օրերին, երբ գնում ես խմբակի.
2) գնալ այնպիսի դպրոց, որտեղ 2-րդ հերթ չկա.
3) դպրոցից պայուսակով միանգամից վազել խմբակ.
4) պարզապես չգնալ խմբակի:

Բայց 21-րդ դարում երեխաները ավելի շատ կարեւորում են երգի, պարի, սպորտի պարապմունքները, քան դպրոցը: Եվ երեւի նրանք ավելի կնախընտրեին 1-ին եւ 2-րդ տարբերակները: Կան նաև այնպիսի երեխաներ, որոնք կնախընտրեին գնալ դպրոց, այլ ոչ թե խմբակի, սակայն նրանց ծնողներն ասում են.

- Լավ, որ էս մի օրն էլ դպրոց չգնաս, ինչ կլինի, հագնվիր, գնում ենք պարի:

Բայց դպրոցն ավելի կարեւոր է, քան խմբակը, որովհետև մենք դպրոցում գիտելիքներ ենք ձեռք բերում, իսկ խմբակներում մենք սովորում ենք երկրորդական, երրորդական բաներ, որոնք կյանքում կարող են մեզ նույնիսկ պետք չգալ:

Եվ վերջում առաջարկենք մի ելք: Նամակ գրել իշխանություններին՝ փոքր դպրոցների մոտ մասնաշենք կառուցել, որ 2-րդ հերթ այլեւս չլինի:

ԱՆԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ, 10 տ.

Մեր հին ընկեր համազգեստը

Ինչպես նշել ենք «Մանկապատանեկան ազգ» ներդիր մեր երկրորդ համարում (28 սեպտեմբեր, 2007 թ.) Արմավիրի մարզի դպրոցների աշակերտներին պարտադրեցին համանման համազգեստ գնել: Արմավիրի մարզի Արաքս գյուղի Ղ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցում աշակերտներից շատերը համազգեստ չեն կրում, սակայն ուսուցիչները պարտադրում են: Նույն դպրոցի ուսուցչուհի ընկեր Ֆասյանը 9-րդ դասարանի աշակերտներին թույլ չի տալիս դասարան մտնել առանց համազգեստի եւ նրանց տուն է ուղարկում զգեստափոխվելու: Այդ օրը աշակերտուհուն տուն է ուղարկում զգեստափոխվելու: Այդ օրը աշակերտուհուն տուն է ուղարկում զգեստափոխվելու: Ամալյան եղիազարյանը ունենում է առողջական հիներից Ամալյա եղիազարյանը ունենում է առողջական հիներից Ամալյա եղիազարյանը ունենում է առողջական հիներից Ամալյան ուսուցչի հանձնարարությամբ տուն է վերադառնում համազգեստ հագնելու, ճանապարհին մտնում է եւ նոպա ունենում: Դասընկերները նրան օգնում են տուն վերադառնալ:

Ամալյան տեղափոխվում է հիվանդանոց բուժվելու: «Ես այստեղ չեմ կրի այդ համազգեստը, բացի այն, որ ես այն տա

Մանկատարտանեկան

unicef

«Ինչն ասել եմ՝ հնարավոր չէ, հետո գլխիս է եկել». Հրաչուհի Ութմազյան

Հրաչուհի Ութմազյանը կամ Հրաչուկը (նա սիրում է, որ իրեն այդպես են անվանում) հայ դասական պոեզիայի իր իմացությամբ կարող է մրցել բոլորի հետ: Դա գալիս է ոչ միայն իր զբաղվածությունից, այլեւ ընտանիքից՝ հանրահայտ հոր եւ տատիկի ժառանգությունից: Հրաչուհին սիրով համաձայնեց հանդիպել եւ զրուցել մեզ հետ: Մենք էլ նույն դրական զգացողություններով ձեզ ենք ներկայացնում Հրաչուհի Ութմազյանի հետ հարցազրույցից մի հատված:



- Ո՞ւմ է Ձեր ամենասիրելի բանաստեղծը:

- Պարույր Սեւակը:

- Ո՞ր ստեղծագործությունն է, որ հուզմունքից չեք կարողանում արտասանել:

- Սիլվա Կապուտիկյանի «Ուշացած խոսքեր» բանաստեղծությունը, որը նվիրված է տատիկին: Ես նոր էի կորցրել տատիկիս՝ մայրիկիս մայրիկին, ում հետ շատ կապված եմ եղել մանկուց: Կարելի է ասել, իմ երկրորդ մայրն է: Տարիներ շարունակ ինձ տրամադրում եմ՝ բեմից հնչեցնել այդ բանաստեղծությունը:

- Ի՞նչ խնդիրներ կան այսօր ասմունքի բնագավառում:

- Որեւէ խնդիր չեմ տեսնում, որովհետեւ այն կարծիքը, թե պոեզիա չեն սիրում ու չեն գնահատում, ինձ համար թյուր է: «Մարդը ափի մեջ» պոեզիայի երեկոն բեմում է շուրջ հինգ տարի եւ ունեցել ենք մոտ 50 երեկո: Դահլիճը միշտ լեփ-լեցուն է լինում: Հիմնականում նստած է երիտասարդությունը: Դա ուրախալի փաստ է: Այսինքն, ովքեր կարդացել են, կարդում են ու էլի կկարդան:

- Ունե՞ք երկրորդ մասնագիտություն:

- Այո, ԵՊՀ միջազգային հարաբերություններ ֆակուլտետում սովորում եմ դիվանագիտություն:

- Ձեզ վախենում, որ «Երկու աստղ» նախագծին մասնակցությունը կփոխի Ձեր իմիջը:

- Ես այն եմ, ինչ կամ: Գուցե հեռուստատեսությունը թելադրում է իր պահանջները, բեմը՝ իր, բայց իմ էությունը դրանից չի փոխվում: Պարզապես ժամանցային շոու է: Մասնակցում եմ մեծ սիրով, եւ զուգընկերոջս հետ հաճելի աշխատանք ենք տանում:

- Վերջերս «Թեժ տասնյակում» հյուրընկալվելով, փորձեցիք ասմունքը համատեղել Արամեի երգի հետ: Հնարավո՞ր է դրա շարունակությունը:

- Դա Ավետ Բարսեղյանի միտքն էր: Ցեմ կարծում, որ կշարունակենք, բայց այս կյանքում ամեն ինչ հնարավոր է: Ինչն ասել եմ՝ հնարավոր չէ, հետո գլխիս է եկել: Այնպես որ, երբեմ մի ասա՝ երբեմ:

- Ձեր հասակակիցների հետ շփվելիս ճանաչված լինելն արգելք հանդիսանո՞ւմ է:

- Իհարկե, ոչ: Ես նորմալ մարդ եմ, ինչպես եւ բոլորը: Եթե ինձ երկու հոգի ավելի է ճանաչում, դա ոչինչ չի նշանակում:

- Ովքե՞ր կարող են վարակվել աստղային հիվանդությամբ:

- Մարդիկ, ովքեր աշխատում են ոչ թե իրենց գործը սիրելով, այլ ճանաչված դառնալու համար: Եթե ունես հարազատներ ու բարեկամներ, ովքեր իրենց սուբյեկտիվ մոտեցումը մի կողմ են դնում եւ օբյեկտիվորեն դատում քո արածները եւ կարող են ճիշտ պահին կանգնեցնել քեզ, սեղմել արգելակը, արա ոչինչ չի սպառնում:

Հարցազրույցը՝
ՀԱՅԿՈՒՀԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ, 16 տ.

Վերադարձիդ սպասելով

Քո աչքերը՝ ջինջ ու բովիչ,
Ու խոսքերդ՝ ջերմ ու հուզիչ,
Փոթորկում են սիրտս ու հոգիս,
Թեւեր տալիս անուրջներիս:
Քո հայացքը՝ մեղմ ու գերող,
Ու շուրթերդ՝ նուրբ ու դյութող,
Խենթացնում են ինձ,
Եվ մոռացնում ամեն ինչ:
Տեսնում եմ քեզ, երբ դու չկաս,
Բայց հուսով եմ, որ կգաս,
Հավատում եմ՝ կգոջաս,
Ու մի օր, սեր իմ, հետ կդառնաս:

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ, 15տ.

Իրավիճակ

Վաղ սիրահարության հետեւանքները

Տասնչորս տարեկան հասակում Անուշը սիրահարվում է իրենից երեք տարով մեծ մի երիտասարդի: Նրանք սկսում են ընկերություն անել, հաճախակի հանդիպել եւ ժամերով խոսել հեռախոսով: Անուշի ծնողները տեղյակ էին, սակայն չէին անդրադառնում դրան: Այսպես անցնում է մեկ տարի: Տղան զորակոչվում է բանակ: Անուշը, չկարողանալով հաշտվել սիրելիի հեռու գտնվելու գաղափարի հետ, վերցնում է ածելին եւ փորձում վնասել նախաբազուկը: Նրան չի հաջողվում լուրջ վնասվածք հասցնել իրեն, այլ միայն մաշկն է վնասում: Խելքի գալով՝ նա որոշում է ուրիշ միջոցների դիմել: Վերցնում է հեռախոսն ու զանգահարում ընկերոջ բջջայինին՝ առանց ծնողների գիտության: Մեկ ամսում նա այնքան է զանգահարում ընկերոջն ու խոսում, որ հեռախոսային վճարը կազմում է մոտ վեց հարյուր դոլար: Անուշը սփոփված է լինում ծնողներին խոստովանել, որ ինքն է խոսել, որպեսզի երկու ֆայրերը չտուժեն: Ծնողները նախատում են նրան, բարկանում եւ արգելում այլեւս խոսել հեռախոսով: Նրան թույլ չեն տալիս անգամ ընկերուհիների զանգերին պատասխանել: Անուշի մտերիմ ընկերուհին պատմում է, որ ամեն անգամ, երբ զանգահարում է ընկերուհուն, մայրն ասում է, որ աղջիկը տանը չէ, մինչդեռ Անուշը այդ ժամանակ տանն է լինում:

Մոտ չորս ամիս է, ինչ Անուշն ապրում է նման պայմաններում եւ հայտնի չէ, թե ծնողները մինչեւ երբ են մտադիր շարունակել ուժի միջոցով պահել պատիժը:

Ա. Գ., 15 տ.

Աստվածների նվագարանը. տավիղ

Տավիղը կոմիթային գործիք է: Ունի 46 լար, որոնք ոտղահայաց դիրքով ձգված են եռանկյունաձեւ շրջանակում: Ժամանակակից տավիղը, որը վերջնական տեսքի է բերվել 19-րդ դարում ֆրանսիացի վարպետ Էրարի կողմից, ունի 7 ոտնակ:

Այն նվագախմբային, նվագակցող եւ մենանվագող գործիք է:

Կախարդական հնչյուններ արձակող այս գործիքը ծնվել է խաղաքարթության զարթոնքի հետ: Այն սիրելի էր հին Եգիպտոսում, Ասորեստանում, Հռոմում եւ Հունաստանում:

Միջին դարերում տավիղը նվաճեց Եվրոպան: Իտալացիները նրա նվագակցությամբ կատարում էին իրենց ասքերը՝ սագաները: Հետագայում այն դարձավ արիստոկրատների սիրելի նվագարանը: Սկսեցին ուսկեզօծել նրա շրջանակը: Հին ժամանակներում որպես կանոն կանայք էին տավիղ նվագում: Բանաստեղծները տավիղն անվանում էին կախարդական գործիք: Իսկ հին հունական դիցաբանության մեջ այն աստվածային էր համարվում: Մեծ երգիչ Օրփեոսը Էվրիդիկեին մեռյալների թագավորությունից ազատում է իր ոսկե տավղի դյութիչ հնչյունների օգնությամբ: Երբ Ապոլլոնը հայտնվում է Օլիմպոսում եւ հնչեցնում է իր տավիղը, երանելի խաղաղություն է տիրում այնտեղ:

Կոմպոզիտորները տավղի հնչյունների օգնությանն են դիմում, երբ պետք է լինում պատկերել բնության կամ անիրական տեսարաններ: Տավղի համար ստեղծագործություններ են գրել Գլազունովը, Գլերը, Չայկովսկին:

ԱՐՓԻՆԵ ՄԻՐԶՈՅԱՆ, 13 տ.

Էս եւ՝ սեւեռ

Դասընկերներս ուրախանում էին իմ դժվարություններով ու սայթաքումներով

Ժամանակակից դպրոցում սովորական է դարձել, որ աշակերտների միայն 10-15 տոկոսն է դասին պատրաստ ներկայանում, իսկ մյուսների համար դպրոցը ժամանցի միջոց է: Ուշագրավն այն է, որ ծույլ աշակերտներից ոմանք վաս են տրամադրվում լավ սովորողների նկատմամբ կամ ընդհանրապես չեն շփվում նրանց հետ:

Տասնհինգամյա Անահիտը պատմում է. «Տարրական դասարաններում իմ եւ դասընկերներիս հարաբերությունները հարթ էին: Չորրորդ դասարանից սկսած համադասարանցիներս բացասաբար տրամադրվեցին իմ հանդեպ: Պատճառն այն էր, որ ես սովորում էի գերազանց առաջադիմությամբ, եւ ուսուցիչները հաճախ էին ինձ գովում: Դասընկերուհիներիցս մեկը, ով ընդհանրապես չէր սովորում, ասում էր, որ վիրավորվում է, երբ ուսուցիչները դասը բացատրելիս հաճախ ինձ են նայում: Դասընկերներս նախանձում էին ինձ եւ ուրախանում ոչ թե իմ հաջողություններով, այլ դժվարություններով ու սայթաքումներով: Ոմանք էլ առերես հավատարիմ էին ձեւանում, իսկ հետո մեջքիս հարվածում: Ես անուշադրության էի մատնում նրանց վերաբերմունքը, արհամարհում, սակայն նրանք չէին փոխվում: Ուրեմն դասարանն ավարտելուց հետո ես դուրս եկա այդ դպրոցից՝ չկարողանալով հանդուրժել կեղծավորությունն ու անազնվությունը»:

Թույլ կամ ծույլ աշակերտները պետք է հասկանան, որ պետք է ոչ թե նախանձել լավ սովորողներին, այլ ուժերի ներածին չափով սովորել եւ հասնել նրանց: Աշխատանքով բարձրացածին ընկած տեսնել ցանկանալու փոխարեն պետք է ջանք չխնայել բարձունքը հաղթահարելու համար:

Ա. Գ., 15տ.

Լավ լուր

Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ մեր նախորդ համարներում, ճիշտ նույն տեղում տպագրված հայտարարությանն արձագանքել են տարբեր դասարանների դպրոցականներ եւ նույնիսկ շրջանավարտներ: Մենք արդեն հասցրել ենք ծանոթանալ եւ ընկերանալ նորեկների հետ: Մենք հաճելի առիթ ունեցանք միացյալ հատուկ դաս անելու եւ ավելի մոտից ծանոթանալու միմյանց ստեղծագործական ունակություններին: Կարծում ենք, որ մենք լավ գործընկերներ ու համախոհներ ենք:

Ի դեմ, եթե ցանկանաս, կարող ես միանալ մեզ: Հիշիր, մենք քեզ սպասում ենք:

Հարգանքներով՝

«Մանկապատանեկան ազգ»-ականներ

Ո՞ւմ համար են գրքերը

Ո՞ւմ համար են գրքերը՝ երիտասարդների, երեխաների թե՞ մեծահասակների: Դժբախտաբար, էլերի: Չէ՞որ կան ավելի կարեւոր գործեր: Բա ո՞վ համակարգչով խաղա, ո՞վ բակում «սեմուչկա չոթի» եւ վերջապես «գլուխգործոց» սերիալները թողած՝ հո գիրք չե՞նք կարդա: Ահա այն պատասխանը, որ ոչ թե լսում, այլ տեսնում ենք, ուսումնասիրելով մեր շուրջ գտնվող շատերին: Սակայն երբ հարցազրույց ես վերցնում, չգիտես ինչպես, բոլորը հանկարծ վերածվում են ընթերցասերների: Լավ կլիներ, որ ոչ միայն խոսքով, այլեւ գործով ապացուցվեր շատերի ընթերցասիրությունը: Վերջերս մի տղա ինձ առաջարկեց Կոմիտաս կարդալ, պնդելով, որ Կոմիտասը հանրաճանաչ գրող է: Դեռեւս կան երեխաներ, ովքեր չեն ճանաչում հանրաճանաչ երգահան Կոմիտասին: Իրոք, ինչի՞ համար են գրքերը՝ գրադարանները զարդարելու, թե՞ կարդալու:

ԱՐՓԻՆԵ ԴԵՐՈՅԱՆ, 13 տ.

Էլ չեն անի

Ցավալի վիրահատներ

Ցնցված մեր ուսուցչուհին մեզ զգուշացրել է, որ. «Ամեն հրապարակում վտանգված է վիրահատների կողմից», ափսոսանքով նկատեցինք, որ «Մանկապատանեկան ազգ»-ի երրորդ համարը չի խուսափել դրանցից: Ցավալի է, որ Մուշեղ Իշխանի տարիքը 93-ի փոխարեն տպագրվել է 193 (էջ Ա), փողոցը սխալմամբ «ողոց» էր դարձել (էջ Ա), իսկ գրականությունը՝ «ֆրականություն»: Մեզ մխիթարում է այն, որ մենք ճիշտ էինք գրել բոլոր բառերն ու թվերը, իսկ մեր մեծահասակ գործընկերներն էլ ներողություն խնդրեցին եւ խոստացան, որ հետագայում ավելի ուշադիր կլինեն, այսինքն վիրահատություններ էլ չեն անի:

«Մանկապատանեկան ազգ»-ականներ

Գիշերվա բերած հյուրը՝ վախ

Գիշերը եկավ: Դրսում վառվեցին լապտերները: Անդորր տիրեց... Բայց ոչ ամենուր: Ոմն է անծանոթ վախը մթությունից: Դա կարող է լինել սարսափ ֆիլմի կամ հոգեբանական ճնշման արդյունք: 8-ամյա Արեգն ասում է, որ 5 տարեկանում նա շատ էր վախենում մթությունից: Երբ տան աստիճաններով բարձրանում էր, նրան թվում էր, թե իրեն հետեւում են եւ ուզում են բռնել: Բայց հիմա էլ չի վախենում, քանի որ հենց մթնում է, նա սկսում է մտածել իրեն հաճելի բաների, օրինակ իր ծննդյան օրվա մասին: Հոգեբաններն ասում են, որ մութն ասոցացվում է մահվան հետ: Այսինքն մարդիկ վախենում են մահից, իսկ այն պատկերանում է մութ, սեւ տեսքով: Վախը հաղթահարելու համար հոգեբանները խորհուրդ են տալիս մտածել սիրելի մարդկանց մասին: 5-ամյա Մերին ասում է, որ մութն ընկնելուն պես ինքը պետք է պառկի քնելու, թե չէ «բոբո ծյածյան» նրան կտանի: Իսկ 13-ամյա Ալլան առաջարկում է սարսափելի երազ տեսնելու դեպքում ոչ թե վախենալ, այլ այն դարձնել ծիծաղելի:

ՍՆԻ ՁԱՔԱՐՅԱՆ, 12 տ.

Ներդիրի պատասխանատու-խմբագիր՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ներդիրի ձեւավորող՝ ԿԱՐԻՆԵ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Հեռ. (093) 369531 e-mail: susmark2002@yahoo.com azg_ik@yahoo.com

Թուրքիայում շարունակվում է հակաքրիստոնեական հիստերիան

Դրա վառ արտահայտությունը ասորի քահանայի առեւանգումն է Մարդինում

Այս տարվա հունվարին Ստամբուլում սպանվեց «Ակոս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը, իսկ ապրիլին Մալաթիայում՝ «Զիրվե» հրատարակչության 3 աշխատակից, որոնք քրիստոնեական գրականություն էին տարածում: Երկու դեպքում էլ մարդասպանները ձերբակալված են: Շարունակվում է նրանց դատավարությունը:

Մարդասպանների դատավարությունը սակայն ամենեւին չի ենթադրում այս սպանությունների վերջնական բացահայտումը, որքան էլ դա թուրքական կառավարության բարոյական պարտքը համարի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Փոխարենը հետզհետե ակնհայտ են դառնում սպանությունների դրդապատճառները, որոնք որոշակի պատկերացում են տալիս, թե ովքեր կարող էին կազմակերպել:

Մեր հայրենակից Հրանտ Դինքի պարագայում ոչ կենտրոնական՝ մասնավորապես իսլամական ոտղվածության թերթերը, սպանության գլխավոր դրդապատճառն են համարում Թուրքիայում Քեմալ Աթաթուրքի կյանքի եւ գործունեության վրա դրված տաբուի դեմ կատարված «ոտնձգությունը» եւ իբրեւ ոտնձգության օրինակ բերում են Սաբիհա Գյոքչենի հայկական ծագման բացահայտումը: Ի դեպ, Գյոքչենը, որի ծագումը բացահայտել էր Դինքը, Աթաթուրքի հոգեդուստրն է եւ ժամանակակից թուրք կնոջը խորհրդանշող կերպար:

«Զիրվե» հրատարակչության աշխատակիցներն էլ սպանվել էին Թուրքիայում պետականության հիմքերն իբր խարխլող քրիստոնյա միսիոներների ակտիվացման պատճառաբանությամբ: Դինքի սպանությամբ Թուրքիայում հրահրվեց հակահայկական համատարած հիստերիա, որի արտահայտությունը դարձավ մարդասպան Օգյուն Սամաստին նմանվելու թուրքական զանգվածների մարմաջը: Հրատարակչության աշխատակիցների սպանության մեջ մեղադրվող 5 թուրք ստահակի դատավարության պատճառով, որն սկսվել էր նոյեմբերի 23-ին, հակահայկական հիստերիան հանկարծ վերածվեց հակաքրիստոնեականի:

Դրան նախորդել էր հոկտեմբերի 21-ին 12 թուրք զինծառայողի սպանությամբ երկրում սկզբնավորված հակաքրդական ռազմարշավը: Դա նոր դրսեւորումներով դեռեւս շարունակվում է երկրում, ընտրելով որպես թիրախ մերթ քուրդ բնակչությանը, մերթ քրդական «Ժողովրդական հասարակաց» կուսակցությանը:

«Ազգը» նոյեմբերի 6-ի համարում գրել էր, որ Թուրքիայում հակաքրդական ռազմարշավն ընդամենը վնասում է Էրդողանի կառավարությանը եւ դրա գործիքն են դառնում «խորքային պետության» ենթակա «գորշ գայլերն» ու քեմալական մտածողության միությունները, ավելացնելով. «Վերոհիշյալ ռազմարշավի բուն կազմակերպիչների նպատակը ոչ թե քրդերն են, այլ Թուրքիայում առանձնաշնորհյալ ընտրախավին դեռեւս Քեմալ Աթաթուրքի օրոք սացած արտոնություններից զրկող Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունն է»:

Այլ կերպ, ռազմարշավը իսլամամետ այս կուսակցության հետ թուլացնում է նաեւ Էրդողանի կառավարության դիրքերը ոչ միայն Եվրոպայում, այլեւ ողջ Արեւմուտքում: Նույնը պետք է ասել նաեւ Թուրքիայում հակահայկական հիստերիայի հրահրման եւ դրա հակաքրիստոնեական վերածման պարագաներում: Թեեւ չկա որեւէ փաստացի ապացույց Հրանտ Դինքի ու «Զիրվե» հրատարակչության 3 աշխատակիցների սպանության մեջ Թուրքիայում «խորքային պետության» գործունեությունը վերահսկող առանձնաշնորհյալ ընտրախավին մեղադրելու համար, սակայն ակնհայտ է սպանությունից հետո երկրում հրահրված հակահայկական եւ հակաքրիստոնեական հիստերիայի պայմանավորումը ինչպես «գորշ գայլերի», այնպես էլ քեմալական մտածողության միությունների ակտիվ գործունեությամբ:

«Գորշ գայլերն» ու միությունները այդ գործունեությունը պատճառաբանում են քեմալական ազգայնականությանը սպառնացող վտանգով, դրա հիմքում դնում են իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության միանձնյա իշխանությունը երկրում եւ վերոհիշյալ հիստերիան ներկայացնում են որպես ազգայնականության պոռթկում ի հակակշիռ ազգային արժեքների ոտնահարման: Մինչ վարչապետ Էրդողանը քննադատում է ազգայնականության պոռթկման հիստերիայով արտահայտված դրսեւորումները, առանձնաշնորհյալ ընտրախավը կառչում է քեմալական ազգայնականությունից, որպեսզի հակադրի իշխանություններին:

Նման իրավիճակում քեմալական ազգայնականությունը առանձնաշնորհյալ ընտրախավի համար դառնում է արտոնությունները պահպանելու ազդեցիկ միջոց, դրա արդյունավետ օգտագործումը ենթադրում է աղտոտվել ազգայնականության պոռթկման որոշակի մակարդակ, ինչը պահանջում է հակահայկական կամ հակաքրիստոնեական հիստերիայի պահպանման նոր առիթների ստեղծումը երկրում:

Թերեւս այդպիսի առիթներից պետք է համարել ասորաբնակ Մարդին վիլայեթի Միդիաթ գավառում ասորական Մար Յակոբ եկեղեցու քահանա Էդիպ Դանիելի առեւանգումը: Նոյեմբերի 28-ի համարում տեղեկացնելով այդ մասին, կառավարամետ «Ենի շաֆաք» թերթը գրում է, որ առեւանգիչները զանգահարել են Ասորական մշակույթի միության նախագահ Յոհաննա Աթաշին եւ քահանայի համար պահանջել են 300 հազար եվրո փրկագին:

Կհաջողվի՞ թուրքական անվտանգության ուժերին ազատել ասորի քահանային առանց փրկագնի, ցույց կտա ժամանակը: Բայց որ նրա առեւանգումը Թուրքիայում հրահրված հակաքրիստոնեական հիստերիայի նոր դրսեւորում է, որը վառ է պահում այդ հիստերիան, ստեղծելով քեմալական ազգայնականության պոռթկումը որոշակի մակարդակի պահելու հավելյալ նախադրյալներ, թերեւս դրանով էլ հերթական վնասն է հասցնում Էրդողանի կառավարությանը, ակնհայտ է: Ինչ առումով: Այն, որ երկրում քեմալական ազգայնականության պոռթկումը որպես իսլամականության պոռթկում բնութագրելու հնարավորություն է տալիս ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի շահագրգիռ քաղաքական շրջանակներին:

ՀՐԱՆՏ ՉԱՔՐՅԱՆ

ԱՄՆ-ում ութից մեկը ներգաղթյալ է

2000-ից մինչեւ օրս ԱՄՆ է տեղափոխվել ավելի քան 10 մլն մարդ, ներկայումս երկրի բնակչության 1/8-ը կազմում են ներգաղթյալները: Ընդսմին եկվորների կեսն ԱՄՆ տարածում ապրում է անօրինական կարգով:

«Նյու Յորք թայմսը» գրում է, որ ԱՄՆ-ում բնակվում է 37,9 մլն ներգաղթյալ: Այդ են վկայում 2007-ի մարտին երկրում անցկացված մարդահամարի արդյունքները, որոնք երեկ հրապարակել է Ներգաղթի ուսումնասիրության կենտրոնը: Երկրում 1920-ականներից ի վեր նման իրավիճակ չէր եղել:

Կենտրոնի ղեկավար Սթիվեն Կամարոտան հանդես է գալիս ներգաղթի սահմանափակման օգտին, պնդելով, թե հասարակությունը շատ է օգնում եկվորներին: Բայց նա չի խոսում ԱՄՆ տնտեսության մեջ օտարների ներդրած ավանդի, նրանց մուծած հարկերի մասին:

Ներգաղթյալների եւ նրանց զավակների մոտ 30 տոկոսը չունի միջնակարգ կրթություն, բուժապահովագրություն (երկրի քաղաքացիների շրջանում այդ ցուցանիշը կազմում է 13 տոկոսը): Այդ մարդկանց մեծ մասը ցածր վարձատրվող գործերով է զբաղվում: Կենտրոնը պնդում է, թե ԱՄՆ-ում այժմ 11,3 մլն ընդհատակյա ներգաղթյալ կա: Եկվոր ընտանիքների 1/3-ն սատնում է սոցիալական օգնություն: Այդ ընտանիքների՝ ԱՄՆ-ում ծնված երեխաները ինքնաբերաբար սատնում են քաղաքացիություն եւ կարող են օգնություն ակնկալել:

Սան Դիեգոյի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Նեյլ Կոռնելիուսը նշում է, որ վերաբնակիչների զավակներն ու թոռները հաջողությամբ մերվում են ամերիկյան հասարակությանը, դառնալով պիտանի քաղաքացիներ:

Պակիստանցի իրավաբաններն ընդդեմ Մուշարաֆի վարչակարգի

Նախագահի պատշգամբը պահպանելու նպատակով նոյեմբերի 28-ին բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը եւ զինվորական ծառայությունը թողած Փերվեզ Մուշարաֆը երեկ երդում է տվել որպես երկրի քաղաքացիական նախագահ: Սակայն հենց երեկ անկարգությունները ծագել Պակիստանի արեւելյան՝ Լահոր քաղաքում: ՌԻԱ գործակալության տվյալներով, մոտ 200 հոգուց: Ոստիկանները սկսել են քարեր նետել, ավտոմեքենաներ բախումներ են սկսել ոստիկանների հետ, ավտոբուսներ բախումներ են սկսել ոստիկանների հետ, բողոքելով Մուշարաֆի վարչակարգի դեմ: Իրավաբանները ոստիկանների վրա են հարձակվել աղյուսներով, ապակե շշերով եւ մահակներով, բղավելով «Մուշարաֆ, կորի՛ր», «Մուշարաֆի բարեկամները դավաճաններ են»:

Մուշարաֆի պատշգամբակալության օրը մթագնվել է նաեւ ահաբեկչությամբ: BBC-ն հաղորդում է, որ Հյուսիսային Վազիրստանի Միրանշահ քաղաքից 20 կմ հեռավորության վրա՝ Աֆղանստանի սահմանի մոտակայքում ճամփեզրին դրված ռումբի պայթյունից զոհվել են 5 եւ վիրավորվել 4 զինծառայողներ:

Բանակի ներկայացուցչի խոսքերով, պայթյունը տեղի է ունեցել զինվորական շարասյան եւ ռազմական տեխնիկայի անցման պահին: Ոստիկանությունն սկսել է ահաբեկչության հանգամանքների քննությունը:

ԳԵՐՄԱՆԻԱ

«Դարֆուր. ինչպե՞ս վերջ տալ ցեղասպանությանը»

Երեկ՝ նոյեմբերի 29-ին, Բոննում, «Դոյչե վելլեի» խմբագրությունում կայացավ «Դարֆուր. ինչպե՞ս վերջ տալ ցեղասպանությանը» վերնագրյալ բաց քննարկումը, որի ենթավերնագիրն է՝ «Միջազգային հանրության պատասխանատվությունը»: Բանավեճը վարեց ռադիոկայանի Աֆրիկայի (Հաուսա) ղեկավար Թոմաս Մյոքը:

Միջոցառումը կազմակերպել էին Բոննի Զարգացման եւ խաղաղության հիմնադրամը, Բոխումի Ռուր համալսարանի Սփյուռքի եւ ցեղասպանության գիտահետազոտական ինստիտուտը՝ Բոննի «Դոյչե վելլեի», Բոննի International Center for Conversation-ի եւ Դուսբուրգի Զարգացման եւ խաղաղության ինստիտուտի համագործակցությամբ:

2003-ին Սուդանի արեւմուտքում ծագեց Դարֆուրի հակամարտությունը, որ 200,000 մարդկային կյանք խլեց, 2,5 միլիոնի պարտադրեց արտաքսվել բնօրրանից: Ապակայունացավ իրադրությունը սահմանակից Չադում եւ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում: Երկարատեւ շրջափակումից հետո 2007-ի հունիսին Սուդան ուղարկվեցին խաղաղապահներ Աֆրիկյան միությունից ու ՄԱԿ-ից: Միջազգային տեսանկյունից մեծ առաջընթաց նկատվող այս գործողությունը սակայն պարզ չի դարձնում, թե, ասենք, խարթումն ուզո՞ւմ է համագործակցել կամ Սուդանի կառավարությունը միջազգային հանրությանը լո՞ւրջ է վերաբերվում, թե՞ մուկ ու կատու է խաղում: Հարցական է նաեւ, թե այս առաքելությունն ու մանդատը խնդրահարույց Դարֆուրին բավարարո՞ւմ են: Ցայժմ գործի դրված խաղաղաստեղծ ջանքերը մեծ արդյունքի չեն գրանցել, միջազգային հանրությունը դաս քաղե՞լ է, մոտ ժամանակներս ակնկալվո՞ւմ է իրադրության շոշափելի բարելավում: Ինչպե՞ս կարելի է դիվանագիտական եւ քաղաքական միջոցներով տարածաշրջանում անհետաձգելի տեւական կայունություն հաստատել:

Ահա այս հարցերը շոշափեցին Բոննի քննարկման մասնակիցներ, Ենայի համալսարանի գիտահետազոտող դոկտ. Մելիա Ռոուք Բիիլը, Բոխումի Սփյուռքի եւ ցեղասպանություն ինստիտուտի հիմնադիր տնօրեն դոկտ. պրոֆ. Միհրան Դաբաղը, Հիլդեսհայմի Sudan Focal Point Europe հասատության տնօրեն Մարինա Փետերը, Հաագայից պատասխանող նախարար, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի Սուդանի հարցով նախկին հատուկ հանձնակատար պրոֆ. Յան Փրոնքը եւ Ջյոլնից դատական պատասխանող նախարար, Սուդանում մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Գերհարդ Ռ. Բաումը:

ԱՆ. Հ. Գերմանիա

«Ալ Ղաիդայի» ամերիկացի բժիշկը դատապարտվեց 25 տարվա ազատազրկման



Ամերիկացի բժիշկ Ռաֆիկ Սաբիրը 25 տարվա բանտարկության է դատապարտվել «Ալ Ղաիդային» օժանդակելու համար: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ 2007-ի մայիսին Ֆլորիդայում բնակվող 53-ամյա նյույորքցի Սաբիրը մեղավոր էր ճանաչվել ահաբեկչական կազմակերպությանը բժշկական օգնություն ցույց տալու նպատակով կազմակերպված դավադրության մեջ: ՀՊԲ-ին հաջողվել էր պարզել, որ Սաբիրը հավատարմության երդում է տվել «Ալ Ղաիդայի» հավատարիմներին:

Բժշկի հետ մեկտեղ երդում է տվել նրա ընկերը՝ ջազային երաժիշտ եւ մարտարվեստների փորձագետ Թարիք Շահը: Վերջինս հավատարիմ ձեւացած հատուկ ծառայությունների գործակալին պատմել է, որ 1998-ին ինքը եւ Սաբիրը մտադրված են եղել ուսուցում անցնել Աֆղանստանում՝ թալիբ ահաբեկիչների ճամբարներից մեկում:

Դատական լսումների ժամանակ Ռաֆիկ Սաբիրը հայտարարել է, թե արաբերեն վատ իմանալու պատճառով ինքը սխալ է հասկացել «Ալ Ղաիդա» բառերը եւ «շեյխ Ուսամա» բառակապակցությունը չի շաղկապել Ուսամա բեն Լադենի անվան հետ: Մեղադրյալի խոսքերով, ինքը համաձայնել է գրոհայիններին բուժել լոկ այն պատճառով, որ բժիշկը պարտավոր է բուժել ամենքին:

Թարիք Շահը եւ երկու այլ ամբաստանյալներ իրենց մեղավոր են ճանաչել դատավարության հենց սկզբում: Նրանք դատապարտվել են 13-15 տարվա բանտարկության:

ԿԺԴՀ-ն կհանվի ահաբեկչությանն աջակցող երկրների ցանկից

ԱՄՆ պետքարտուղարի Արեւելյան Ասիայի եւ խաղաղ օվկիանոսի գործերի գծով օգնական Քրիստոֆեր Հիլը երեկ Սեուլ ժամանելուն պես հայտարարել է, որ իր երկիրը պատրաստվում է ԿԺԴՀ-ի անունը հանել ահաբեկչությունը հովանավորող երկրների ցանկից: Հիլի խոսքերով, դրան պետք է նախորդեն «մի շարք քայլեր»:

Մասնավորապես Վաշինգտոնն ակնկալում է արդեն եկող շաբաթ Փենյանից սատնալ հյուսիսկորեական բոլոր միջուկային ծրագրերի ցանկի նախագիծը, ինչը վեցակողմ բանակցությունների պատվիրակությունների ղեկավարներին թույլ կտա քննարկում ծավալել բանակցությունների հերթական փուլում:

Անդրադառնալով ԿԺԴՀ-ի եւ Սիրիայի միջուկային համագործակցության հետ կապված կասկածներին, Հիլը նշել է միայն, որ Փենյանի միջուկային ծրագրերի ցանկը պետք է ներառի նաեւ միջուկային զենքի տարածմանն ուղղված գործունեությունը, եթե այն գոյություն ունի:

Հիլը հանդիպում կունենա վեցակողմ բանակցություններում ԿԺԴՀ պատվիրակության ղեկավար Կիմ Գե Գվանի հետ եւ կքննարկի հյուսիսկորեական գլխավոր միջուկային օբյեկտները շարից դուրս բերելուց հետո 2008-ին կատարվելիք քայլերը: Սպասվում է, որ եկող շաբաթ Հիլը կայցելի Յոնբենում գտնվող միջուկային կենտրոն:

Սինհուա գործակալությունը հաղորդում է, որ նոյեմբերի 27-ից ԿԺԴՀ-ում աշխատում է ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի, Հարավային Կորեայի եւ Ճապոնիայի դիվանագետների ու փորձագետների խումբը, որը հետեւում է Յոնբենի գիտահետազոտական կենտրոնում միջուկային օբյեկտները շարից դուրս բերելու քայլերին: Խումբը պետք է ոչ պատշաճական հաշվետվություն ներկայացնի «վեցյակի» պատվիրակությունների ղեկավարներին:

Փորձագետների խումբը դրականորեն է գնահատում ԿԺԴՀ միջուկային օբյեկտները շարից դուրս բերելու աշխատանքների ընթացքը: Այդ մասին երեկ հայտարարեց խմբի ղեկավար, չին փորձագետ Չեն Նայցինը:

Դասականի հավերժական ուժը

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի համերգասրահը Արամ Ղարաբեկյանի շնորհիվ հաջողությամբ հավակնում է դառնալ Երեւանի համերգային հարթակներից մեկը: Եվ քանի որ մայրաքաղաքում չկա ակուռիկ բոլոր պարամետրերին համապատասխանող որեւէ համերգասրահ, Հայաստանի պետական կամերային նվագախմբի կողմից զանազան սրահների ազատ օգտագործումը, ընդհուպ բացօթյա ելույթները զարմանք չեն հարուցում:

Գլխավորն այն է, որ վերջին տասնամյակում Արամ Ղարաբեկյանը ամբողջ հանրապետությունում եւ Արցախում (ընթացիկ սեպտեմբերին այնտեղ անցկացվեց առաջին փառատոնը) պլանաչափորեն սեր է սերմանում ակադեմիական երաժշտության նկատմամբ: Դժվար է գերագնահատել այդ փաստի նշանակությունը ներկայիս երաժշտաբնապահպանական իրավիճակում, երբ բացակայում են պատկերացումները ճաշակի, ոճի, երաժշտական արտադրանքի որակի ու գեղարվեստականության վերաբերյալ: Այդ արտադրանքի իրացման շուկան վերածվել է արեւելյան հսկա վաճառատեղի, որտեղ ամեն առեւտրական մտահոգված է իր ապրանքի վաճառքով, չհոգալով հանուրի բարքության մասին:

Այն, որ ներկայումս նկատվում է շուկային ակադեմիական, նախ եւ առաջ դասական արվեստով հագեցվելու միտում, լավատեսություն է ներշնչում: Այդ շարժման ակտիվ մասնակից Հայաստանի կամերային նվագախումբը մայիսից շրջել է ամբողջ հանրապետությունում: Կարելի է միայն պատկերացնել տվյալ ձեռնարկման կարեւորությունը. Հայաստանում քանի՞-քանի՞ մարդ տարիներով չէր լսել կենդանի դասական երաժշտություն:

Ահա թե ինչու, չնայած Սլավոնական համալսարանի սրահի խոցելի ակուստիկային (հնչողության չորությունը խանգարում էր նվագախմբի տեմբրային միաձուլմանը), դրական է որ ուսանող երիտասարդության նոր սերունդը հաղորդակցվում է երաժշտությանը: 3. Փախելբելի, 3. Հայդնի եւ Լ. վան Բեթհովենի ստեղծագործություններ ընդգրկած նոյեմբերի 24-ի համերգի ծրագիրն անտարբեր չթողեց նաեւ գիտակներին:

Մասնավորապես, 17-րդ դարի գերմանացի կոմպոզիտոր Յոհան Փախելբելի լարայիններին Կանոնն ու Ժիգան, կատարվելով առանց դիրիժորի, բայց նվագախմբի առաջին ջութակ Թամար Պետրոսյանի առաջնորդությամբ, հաստատեցին basso ostinato հնարքի վրա հիմնված պոլիֆոնիկ ձեւերի կարեւոր այժմեականությունը: Թե ջազը եւ թե մինիմալիզմը մեզ հիշեցնում են «համառ բասի» դինամիկ ուժը, որի վրա տարբեր համադրություններով ավելանում են փոփոխվող ձայները: Նվագախումբը, անգիր նվագելով՝ երաժշտությանը հաղորդեց non-stop հայտնի ոճով իմպրովիզացնելու ոգեւորությունը: Փախելբելը հնչեց թարմ եւ արդիական:

Դահլիճի վաստակ համերգային դաշնամուրը հանրապետության ժողովրդական արտիստուհի Սվետլանա Նավասարդյանին սիրեց փոխել ծրագիրը. նա մենակատարն էր 3. Հայդնի դաշնամուրի ու նվագախմբի ռե մաժոր Կոնցերտում (կոմպոզիտորի մոտ «կլավիչեմբալո» է եւ ոչ թե դաշնամուր): Հետաքրքրական է, որ Կոնցերտի առաջին մասը հիմնված է նույն թեմայի վրա, ինչ Մոցարտի դաշնամուրի ու նվագախմբի սոլ մաժոր Կոնցերտը: Ավելին, երկու կոնցերտներն էլ ստեղծված են 1784-ին: Բացառված չէ, որ Հայդնը գտնված լիներ իր կրտսեր ժամանակակցի ազդեցության տակ: Ճիշտ է, Կոնցերտի երկրորդ մասը տիպիկ հայդնյան է: Ի տարբերություն Մոցարտի մելոդիկ գեղեցկությունների, Հայդնը նախընտրում է զուսպ, ավելի ինքնախորասուզված ներաշխարհը: Ի դեմ, Հայդնի դանդաղ մասի տիպը զարգացում ստացավ Բեթհովենի ստեղծագործության մեջ: Վերջինս նույնպես հակված էր ձեւի դասական համամասնությունները խախտող դանդաղ երաժշտության ազատ հոսքին:

Հայ դաշնակահարի վարպետությունը եւ անվիճելի առաջնությունը հաստատած Սվետլանա Նավասարդյանը Հայդնի կոնցերտը նվագեց ներքին մեծ ազատությամբ: Նա համարձակորեն միավորեց կառուցվածքների մասնատվածությունը եւ պասաժների (ավելի ճիշտ՝ հնչյունների մարգարտացայտերի) ռիթմիկ շեշտվածությունը անկանխատեսելի տեմպային տեղաշարժերով, միջին ձայներում առանձին ֆրազների կամ նվագանցի ընդգծմամբ: Սովորականի պես լինելով ոչ միայն մենակատար, այլեւ մեկնաբանության նախաձեռնող, Նավասարդյանը Հայդնի պարտիտուրը ներկայացրեց ոչ թե որպես երաժշտական մասունք, այլ որպես ներշնչանքի եւ ստեղծագործական փորձարարության աղբյուր:

Երեկոյի երկրորդ բաժնում հնչեց Բեթհովենի վերջին ստեղծագործություններից մեկը՝ դո դիեզ մաժոր թիվ 14 Լարային կվարտետը (երկ 131)՝ լարային նվագախմբի համար Արամ Ղարաբեկյանի մշակմամբ: Բեթհովենի յոթ մասանոց, ոչ ավանդական հայեցակարգով, առավելապես դանդաղ տեմպերով կվարտետն ասես աշխարհին հրաժեշտ տվող արվեստագետի խոստովանանքը լինի: Դանդաղ առաջին մասի սկզբնական ֆուգայից մինչեւ չորրորդի բարձրակետ Andante-ն հանդարտ զարգացումը վերածվեց տեւական ռոմանտիկ խորհրդածության: Առհասարակ թիվ 14 Կվարտետը կարելի է համարել 20-րդ դարի բազմաթիվ դանդաղ ստեղծագործությունների նախօրինակը:

Ղարաբեկյանի նվագախմբային լուծումը, բնականաբար, խոշորացրեց կերպարները, առավել հստակ բացահայտեց ֆակտուրայի ներքին ձայների միահյուսումը, ինչպես նաեւ վերջին մասերի հակադրությունը: Անչափ բարդ այս ստեղծագործության գլխավոր արժանիքը միջանցիկ հոգեւոր կերտվածքի ապահովումն է, որը գրեթե հինգ ժամ լարվածության մեջ պահեց ամբողջ դահլիճը:

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳՍՅԱՆ,
Արվեստագիտության դոկտոր

Վահրամ Թադեւոսյան. «Պարտ եմ հայրենիքս փառաբանելու հիմք տալու համար»

Վանո Թադեո Լեւոնին, նույն ինքը՝ Վահրամ Լեւոնի Թադեւոսյանը, որ այսօր հաստատուն տեղ ունի ճանաչում վայելող տենորների շարքում, միայն օժտվածության շնորհիվ չէ մասնագիտական հաջողություններ ապահովել՝ եղել է նաեւ ներքին պայքար, ընտրության դժվարություն: Նախ գեղանկարչությունն է ընտրել ու սովորել Թեղենեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, ապա նրան հանգիստ չի տվել երգարվեստը: Ու թեեւ գույնի լեզուն իրեն հասկանալի էր ասելիք ունենալու չափ, սակայն հնչյունն իր համար ավելի թովիչ էր: Ի վերջո հաղթեց հնչյունը, ու Վահրամը դրսեւորեց սեփական հնարավորությունները վոկալ արվեստում: Առաջին մեծ հաջողությունն այդ ատյարեզում, որ բացեց դուռը դեպի ճանաչում, երգիչը համարում է 1996 թվականին Բարսելոնում Ֆրանցիսկո Վինիասի անվան միջազգային մրցույթում Ջուզեպպե Վերդիի անվան մրցանակին արժանանալը: Դրան հաջորդեց էխստեն կարգով Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան ավարտելն ու համերգների շարքը Իտալիայի տարբեր քաղաքներում: Շարունակվեցին շրջայցային հաջողությունները, որ աշխատանքի ու օժտվածության հանրագումար էին, ըստ երգչի, իսկ համաձայն եվրոպական մամուլի. «վերջին ժամանակների յուրահատուկ, փայլուն տենորի արժանի գնահատական»: Վահրամ Թադեւոսյանը փորձ ունի կատարումներով հանդես գալու աշխարհահռչակ երգիչների հետ: Նրանցից մեկը՝ Ջակոմո Առագալը, Վահրամի տաղանդը գնահատելով, առաջարկել է իր փոխարեն երգել Մոնսերատ Կաբալիեի հետ: Ի դեմ վերջինը Վահրամի երազանքն էր, որ այլեւս իրականություն է:

Թեեւ արդեն 7 տարի Վահրամ Թադեւոսյանն ապրում է Իսպանիայում ու հանդես գալիս հանրահայտ եւ հեղինակավոր օպերային թատրոններում ու բեմերում եւ, ինչպես ինքն է ասում, բեմական ու մասնագիտական լավ «մարզավիճակում» է, աշխատանքային գրաֆիկն էլ բավականին խիտ է, սակայն գոնե վերջին երեք տարիներին Հայաստանում պարտադիր հանդես է գալիս առնվազն մեկ համերգով: Սա բացատրում է ոչ միայն եւս մի բեմում հանդես գալու ձգտմամբ, այլեւ ուղղակի հայրենիքում ներկայանալու ցանկությամբ: Անցած եւ այս տարի երգիչը Հայաստանի անկախության 15 եւ 16-ամյակներին նվիրված համերգներով հանդես է եկել Երեւանում: Այնուամենայնիվ, Վահրամը նշեց, որ իր ճանաչումն ու տաղանդի գնահատումը նախ հայրենիքից դուրս է եղել, բայց միեւնույն է, ինչպես շատ տաղանդավոր հայորդիներ, այնպես էլ նա հպարտությամբ է ներկայանում աշխարհին որպես հայկականության կրող եւ առիթը բաց չի թողնում Հայաստանը ներկայացնելու. «Երբ 2006-ի դեկտեմբերին եւ ապա այս տարի մարտին Իոսիֆ Կոբզոնի նախաձեռնությամբ հրավեր ստացա ու մասնակցեցի Կիեւում եւ Մինսկում կայացած փառատոներին, արժանացա ունկնդրի բուռն ընդունելությանը: Սակայն առավել հպարտություն ունեցա, երբ Ուկրաինայի եւ Բելառուսի նախագահները բաժակ բարձրացրեցին հանուն այն հողի, որը նման տենորի հայրենիքն է: Հայաստանը փառաբանելու առիթ տալու համար շատ ուրախ եմ, բայց եւ առավել պատասխանատվություն եմ զգում այդ առումով», ասաց Վահրամ Թադեւոսյանը: Երեւի հենց դրանով էլ բացատրվում է այն, որ Վահրամն ինքն իր հետ լինելիս՝ ինքն իր համար երգում է «Կիլիկիա» ու «Հայաստան՝ երկիր դրախտավայր»:

Ի դեմ նրա երգացանկում են նաեւ հայկական եւ հատկապես կոմիտասյան գործեր:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՆԱՑՈՒՄ

Հայկ Զորիկյանը վերադարձավ եւս երկու նոր մրցանակով

Նոյեմբերի 15-22-ը Լեհաստանի Վրոցլավ քաղաքում անցկացվեց «Մեկ դերասանի թատրոնի» հերթական՝ 41-րդ միջազգային փառատոնը, որին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրների ավելի քան 100 արտիստներ: Փառատոնին մասնակցում էր նաեւ Երեւանի մնջախաղի թատրոնի արտիստ Հայկ Զորիկյանը: Նրա «Համլետ» ներկայացումը, որը ժյուրիի եւ հանդիսատեսի դատին հանձնվեց նոյեմբերի 16-ին, արժանացավ բարձր գնահատականի եւ երկու մրցանակի: Լեհաստանի թատերական գործիչների միության եւ լեհ հանրահայտ արտիստուհի Իրենա Ոժեզովսկայայի անվան մրցանակները եւս մեկ անգամ հաստատեցին, որ մեր թատրոնը, հատկապես՝ մնջախաղի թատրոնը այսօր լուրջ արտիստ ունի:

Ս. ԳԱԼՈՅԱՆ

Էրմիտաժը ընդլայնում է գործունեությունը

Մասնաճյուղ՝ Ֆեռարայում

Աշխարհի ճանաչված թանգարաններից՝ Էրմիտաժը, որին տրված անունը ֆրանսերենում նշանակում է «մենավոր տուն», ընդարձակում է իր գործունեությունը Եվրոպայում: Վենետիկի, Թուրինի, Վերոնայի եւ Մանտուայի գեղատեսիլ վայրերի սիրասոյնր հորդորները անպատասխան են մնացել: Էրմիտաժը ինքն է կատարել իր սիրեցյալ վայրի ընտրությունը:

«ART news» հանդեսի լրագրող Ջուդիթ Հարիսը հաղորդում է, որ 1764-ին ստեղծված Սանկտ Պետերբուրգի գեղարվեստական եւ պատմամշակութային այդ կենտրոնը որոշել է Իտալիայի հյուսիսային մասում գտնվող Ֆեռարա քաղաքի «Կաստելլո էստենսե» դղյակը դարձնել Եվրոպայում իր մասնաճյուղը՝ «Էրմիտաժ-Իտալիա: Ուսումնասիրությունների եւ մշակույթի կենտրոն» անվանումով:

Նոր կենտրոնը, բացի Էրմիտաժի եւ այլ թանգարանների ցուցանմուշների ժամանակավոր ցուցահանդեսներ կազմակերպելուց, խթանելու է գիտական հետազոտական աշխատանքներն ու ռուս եւ իտալացի համակարգողների վերապատրաստումը: Կենտրոնի 612 հազար դոլարի տարեկան ծախսերը հոգալու են երկու կողմերի ինչպես քաղաքային, այնպես էլ տեղական, շրջանային մարմինները:

Էրմիտաժը տարբեր երկրների հետ փոխադարձ ցուցահանդեսներ կազմակերպելու համաձայնագրեր արդեն իսկ ուներ Ամստերդամում, Լաս Վեգասում եւ Լոնդոնում գործող իր «արբանյակային» մշակական բաժանմունքների շնորհիվ: Այժմ համագործակցության բանակցություններ են տարվում եւս մեկի՝ Թեհրանում «Իրանի Ազգային թանգարանի» հետ: Բայց ըստ Էրմիտաժի երկարամյա դիրեկտոր՝ ակադեմիկոս Պիոտրովսկու, Ֆեռարայի կենտրոնը մինչ այժմ իրագործված «ամենախիզախ նախաձեռնությունն է»: «Մենք Ֆեռարան ընտրեցինք, որովհետեւ մեզ դուր եկավ նրա համեմատաբար փոքրիկ չափերը, բայց նաեւ այդ քաղաքի համալսարանի իտալական մյուս մշակութային կենտրոններին հետ սերտ կապեր ունենալու հանգամանքը», նշել է նա «Արտնյուսի» թղթակցին: Ֆեռարայում են ստեղծագործել Վերածննդի շրջանի շատ հեղինակավոր արվեստագետներ, ինչպես, օրինակ, Պիետրո Դելլա Ֆրանչեսկան, Տիցիանը եւ Կոսիմո Տոռտան: Հենց այդ պատճառով էլ կենտրոնի առաջին ցուցահանդեսը, որը բացվել է տարեվերջին կամ 2008-ի սկզբներին, նվիրված է լինելու նրանց:

Կենտրոնը զբաղեցնում է երկու շենքեր, որոնց վերանորոգման համար Ֆեռարայի շրջանային կառավարությունը 1,2 միլիոն դոլար է տրամադրել: Քաղաքապետ Գաետանո Սաստրիսլենն պարզաբանել է, որ Ֆեռարան մյուս քաղաքների համեմատությամբ առավելություն ուներ, քանի որ բացի ցուցահանդեսներ կազմակերպելուց, «մենք պատրաստ էինք նաեւ գիտական ուսումնասիրությունների կենտրոն դառնալ»:

Պիոտրովսկին հույս է հայտնել, որ նորաստեղծ օջախը նպաստելու է ընդլայնելու Ռուսաստանի եւ Իտալիայի միջեւ մշակութային իրատությունների փոխանակման գոյություն ունեցող հնարավորությունները:

Հ. ՕՌՈՒԼԿՅԱՆ

Եվրոպական ֆիլմերի փառատոն

Մեր երկրում եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունն ու Ֆրանսիայի, Գերմանիայի, Միացյալ Թագավորության, Իտալիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Նիդեռլանդների դեսպանատները, բրիտանական խորհուրդը եւ ԵԱՀԿ գրասենյակը նոյեմբերի 21-30-ը անցկացրին եվրոպական ֆիլմերի փառատոն՝ Երեւանում, Գյումրիում ու Կապանում: Փառատոնային ֆիլմերից առաջ ցուցադրվեցին «Ոսկե ծիրան» կինոփառատոնում այս տարի ընդգրկված կարճամետրաժ ֆիլմերը:

Ռ. Պ.

Հայ շախմատիստներին չհաջողվեց մրցանակակիր դառնալ

Անթալիայում ավարտվեց շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը: Ցավոք, հայ շախմատիստներն անմասն մնացին խաղարկվող մեդալներից, թեեւ դրա հնարավորությունը կար:

Ինչպես տեղեկացրել էինք, մեր շախմատիստներից մրցանակակիր դառնալու ամենամեծ հնարավորություններն ուներ Սամվել Տեր-Սահակյանը: Մինչեւ 14 տարեկանների մրցավեճում Սամվելն ուներ 8 միավոր եւ ընդամենը կես միավոր էր զիջում աղյուսակը գլխավորող Ջեն Վանգին: Մեր շախմատիստը սեւերով մրցում էր լեհ Մարչել Կանարեկի հետ: Երկու շախմատիստներն էլ անցողիկ զինվոր ունեին: Առաջինը մրցակցին հաջողվեց զինվորը թագուհու փոխակերպել, ինչն էլ վճռեց մրցակցության ելքը հօգուտ լեհ շախմատիստի: Այսպիսով, Սամվել Տեր-Սահակյանը զրկվեց մեդալից եւ 8 միավորով զբաղեցրեց 6-րդ տեղը:

Տարիքային այս խմբում մեր մյուս շախմատիստները՝ Ռոբերտ Հովսեփյանն ու Վահե Բաղդասարյանը ոչ-ոքի ավարտեցին վերջին տուրի հանդիպումները եւ վաստակեցին 6,5-ական միավոր: Նրանք զբաղեցրին համապատասխանաբար 39-րդ եւ 43-րդ տեղերը: Ջեմպիոնի, իարգը վճռվեց ռուսաստանցի միջազգային վարպետ Սանան Սյուգիրովի եւ չին շախմատիստ Ջեն Վանգի մրցավեճում: Հաջողությունն ուղեկցեց սպիտակներով խաղացող Սյուգիրովին, որը հաղթելով, վաստակեց 9 միավոր: Նա գործակիցներով գերազանցեց նույնքան միավոր վաստակած Մարչել Կանարեկին եւ հռչակվեց աշխարհի չեմպիոն: Իսկ Ջեն Վանգը բավարարվեց բրոնզե մեդալով՝ լրացուցիչ գործակիցներով առաջ անցնելով նույնպես 8,5 միավոր վաստակած Վլադիմիր Բելոուսից եւ Դարիուշ Շվարցից:

Հայ պատանիներից լավագույն արդյունքի հասավ Ավետիք Գրիգորյանը, որը մինչեւ 18 տարեկանների մրցավեճում 8 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը: Ավարտական տուրում նա հաղթեց Սեմեսեյ Տոլոգոնսեգինին: Հովիկ Հայրապետյանը հաղթելով Քրիստոֆեր Շվարհոֆերին, 7 միավորով զբաղեցրեց 15-րդ տեղը: Նույնքան միավորով 16-րդն էր Հրանտ Մելքումյանը, որը զիջեց Ռոլանդ Պրոփջերսին:

Տարիքային այս խմբում չեմպիոնի տիտղոսին արժանացավ ռուսաստանցի Իվան Պոպովը, որը հաղթեց Դավիթ Հովելին ու վաստակեց 9 միավոր: 2-րդ տեղը 8,5 միավորով զբաղեցրեց Ռոման Էդուարդը: Բրոնզե մեդալը նվաճեց ռուսաստանցի Ալեքսանդր Ռահմանովը (8,5 միավոր): Ռուսաստանցի Պողոս Նահապետյանը 8 միավորով զբաղեցրեց 5-րդ հորիզոնականը:

Հայ շախմատիստներից՝ բոլորից շատ միավոր վաստակեց մեր ամենակրտսեր մասնակից Տիգրան Հարությունյանը (8,5 միավոր)՝ զբաղեցնելով 5-րդ տեղը: Ավարտական տուրում նա հաղթեց Շարդուլ Գագարեին: Մանուել Պետրոսյանը 7 միավորով 25-րդն էր, իսկ Հրանտ Մեժլումյանը 5,5 միավորով գրավեց 80-րդ տեղը: Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում բարձր արդյունքներ գրանցվեցին: Բավական է նշել, որ չեմպիոնը՝ չին շախմատիստ Սեն Վանգ Տոնգը վաստակեց 10 միավոր: Նման արդյունքի հասել էր միայն մինչեւ 8 տարեկանների չեմպիոն, ռուսաստանցի Կոնստանտին Սավենկովը: Ի դեպ, ամենակրտսեր տարիքային խմբում Եվրոպայի չեմպիոն հայազգի Նիկիտա Այվազյանը, որ բնակվում է Մոսկվայում, 7,5 միավորով գրավեց 7-րդ տեղը:

Մինչեւ 12 տարեկանների մրցավեճում Հովհաննես Գաբուզյանը 6,5 միավորով 37-րդն էր, իսկ Նորայր Թորոսյանը 6 միավորով զբաղեցրեց 50-րդ տեղը: Այստեղ երկու շախմատիստ՝ ԱՄՆ-ն ներկայացնող Դանիել Նարոդիտսկին եւ ուկրաինացի Իլյա Նիզնիկը վաստակել էին հավասար՝ 9,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով չեմպիոն հռչակվեց ԱՄՆ-ի պատվիրակը:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարի մասնակից Ռոբերտ Հովհաննիսյանը 7 միավորով գրավեց 12-րդ տեղը, իսկ Դավիթ Գետոգյանը 6 միավորով 38-րդն էր: Տարիքային այս խմբում միանգամից չորս շախմատիստ վաստակել էր 8,5 միավոր: Լրացուցիչ գործակիցներով չեմպիոնի տիտղոսը նվաճեց ռումինացի Քրիստիան Խիրիլան:

Մեր շախմատիստուհիների արդյունքներն ավելի համեստ են: Լավագույն արդյունքի հասավ Լուսինե Թորոսյանը, որը 6,5 միավորով մինչեւ 14 տարեկանների մրցաշարում զբաղեցրեց 34-րդ տեղը: 6-ական միավոր վաստակեցին Սվետլանա Միրզաբեկյանը (43-րդ տեղ, մինչեւ 12 տ.) եւ Նունե Դարբինյանը (31-րդ տեղ, մինչեւ 18 տ.): Մարիամ Մանուկյանը (77-րդ տեղ, մինչեւ 10 տ.) եւ Արայակ Կարխանյանը (85-րդ տեղ, մինչեւ 16 տ.) իրենց օգտին 4,5-ական միավոր գրանցեցին:

Աղջիկների մրցաշարում տարիքային տարբեր խմբերում չեմպիոններ հռչակվեցին Աննա Ստյազկինան (Ռուսաստան)՝ 9,5 միավոր, Մարսել Եֆրիմսկին (Իսրայել)՝ 9,5, Նազի Պաիկիձեն (Վրաստան)՝ 9,5, Կետի Չաչալաշվիլին (Վրաստան)՝ 8,5 եւ Վալենտինա Գունինան (Ռուսաստան)՝ 9:

«Միլանն» ու «Չելսին» էլ կարունակեն պայքարը

Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 5-րդ տուրի հանդիպումների երկրորդ օրը եւս երկու թիմ՝ «Չելսին» ու «Միլանը» հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին: Այսպիսով, արդեն 8 թիմեր իրավունք են ստացել պայքարը շարունակել 1/8 եզրափակիչում: Հետաքրքրական է, որ դրանք ներկայացնում են երեք երկրներ՝ Իտալիան, Անգլիան (3-ական թիմ) եւ Իսպանիան (2):

«Չելսին» Նորվեգիայի չեմպիոնի հետ արտագնա խաղում կրած տպավորիչ հաղթանակով (4-0) ուղեգիր նվաճեց: Հանդիպման հերոսը Դիդյե Դրոգբան էր, որն առաջին 20 րոպեում երկու անգամ գրավեց «Ռուսենբորգի» դարպասը: «Բ» խմբում կայացած մյուս խաղում «Վալենսիայի» եւ «Շալկե-04»-ի ֆուտբոլիստներն այդպես էլ չգտան մրցակցի դարպասի բանալին: Այս խմբում երկրորդ ուղեգրի բախտը կվճռվի դեկտեմբերի 11-ին կայանալիք «Շալկե-04»-«Ռուսենբորգ» մրցախաղում: 7 միավոր ունեցող «Ռուսենբորգին» բավարարում է ոչ-ոքի արդյունքը, մինչդեռ գերմանացիները (5 միավոր) պետք է ձգտեն հաղթել:

Չեմպիոնների ներկայիս գավաթակիր «Միլանը» հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը «Բենֆիկայի» հետ: Մյուս խաղում «Սելթիկը» 2-1 հաշվով հաղթեց Դոնեցկի «Շախտյորին» եւ վաստակելով 9 միավոր, գործնականում ապահովեց տեղը հաջորդ փուլում: Ավարտական խաղում «Սելթիկը» մրցելու է «Միլանի» հետ, իսկ 6 միավոր ունեցող «Շախտյորը» հյուրընկալելու է «Բենֆիկային»: Ուղեգիր նվաճելու համար նախ «Շախտյորը» պետք է խոշոր հաշվով հաղթի «Բենֆիկային», իսկ «Սելթիկն» էլ պարտվի «Միլանից»: Ինչ խոսք, դեպքերի նման ընթացքն այնքան էլ հավանական չէ:

Ժամկետից շուտ ուղեգիր կարող էր նվաճել նաեւ Մադրիդի «Ռեալը»: Սակայն հաջողության հասնելուն խանգարեց Բրեմենի «Վերդերը», որը հոյակապ խաղ ցուցադրեց եւ 3-2 հաշվով հաղթեց մրցակցին: Խաղից հետո մարզիչները հետեւյալ կարծիքն էին արտահայտել:

Թոմաս Շաաֆ («Վերդեր»)- Այսօր աննկարագրելի երեկո էր: Չնայած մեր թիմի ֆուտբոլիստների մի շարք վնասվածքներին, մենք ընդունեցինք մարտահրավերը եւ հոյակապ ֆուտբոլ ցուցադրեցինք: Յուրաքանչյուր ֆուտբոլիստ իր ուժերի գերագույն լարումով խաղաց: Արագ խփած գոլը եւ մինչեւ ընդմիջում գրանցված երկրորդ գոլը մեզ վստահություն հաղորդեցին: Հաղթանակը մեզ լրացուցիչ լիցք հաղորդեց ուղեգրի համար մղվող պայքարում:

Բեռնդ Շուստեր («Ռեալ»)- Ինձ թվում է, որոշ չափով հեշտացրինք մրցակցի խնդիրը մեր անփույթ պաշտպանությամբ: Դա ինձ հիասթափեցրեց: Մրցակիցը արագորեն օգտվեց դրանից: Ընդհանուր առմամբ այսօր մենք այնքան էլ շատ չէինք տիրում գնդակին եւ փոխանցումների ժամանակ էլ շատ էինք սխալվում: Զգուշացրել էի սաներիս, որ «Վերդերը» վտանգավոր մրցակից է: Չնայած պարտությանը, լավ հնարավորություն ունենք զբաղեցնելու առաջին տեղը:

«Շ» խմբում պայքարը թեժացավ: «Օլիմպիակոսը» հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթելով «Լացիոյին», եւս վաստակեց 8 միավոր ու հավասարվեց «Ռեալին»: Ուղեգրերի բախտը կվճռեն դեկտեմբերի 11-ին կայանալիք «Օլիմպիակոս»-«Վերդեր» եւ «Ռեալ»-«Լացիո» հանդիպումները:

Ուղեգրերի համար համառ պայքար է ծավալվել նաեւ «Ա» խմբում: Այստեղ 8 միավորով առաջատարը «Պորտոն» է, որը հյուրընկալվելիս 1-4 հաշվով զիջեց «Լիվերպուլին»: Վերջինս «Մարսելի» հետ ունի 7 միավոր, որն արտագնա խաղում 1-2 հաշվով պարտվեց «Բեշիքթաշին»: Թուրքական ակումբը ունի 6 միավոր: Ավարտական տուրի «Մարսել»-«Լիվերպուլ», «Պորտո»-«Բեշիքթաշ» մրցախաղերը կորոշեն երկու ուժեղագույններին, որոնք էլ կարունակեն պայքարը:

ՍՐԵՏՍԿԻ ԳԱՎԱԹ

Ռաջաբովը դուրս մնաց պայքարից

Լեւոն Արոնյանն ու Վլադիմիր Հակոբյանը հաջողությամբ հաղթահարեցին նաեւ աշխարհի գավաթի խաղարկության երկրորդ փուլի արգելքը: Մեր շախմատիստները միեւնույն 1,5-0,5 հաշվով պարտության մատնեցին համապատասխանաբար 3ան Գուասաֆսոնին ու Էշան Ղաեմին: 3-րդ փուլում Լեւոն Արոնյանի մրցակիցը կլինի ռուսաստանցի Էռնեստ Ինարկիեւը, իսկ Հակոբյանը կմրցի ռուսաստանցի մեկ այլ շախմատիստի՝ Վլադիմիր Մալախովի հետ:

Էռնեստ Ինարկիեւը 2-րդ փուլում 1,5-0,5 հաշվով պարտության էր մատնել իսպանացի Ֆրանսիսկո Վալյեխոյին: Իսկ Մալախովին հաջորդ փուլի ուղեգիր նվաճելու համար հարկ եղավ լրացուցիչ մրցախաղ անցկացնել Սերգեյ Վոլկովի հետ: Դասական շախմատի կանոններով նրանց միջեւ կայացած երկու պարտիաներում էլ գրանցվել էր ոչ-ոքի: Արագ շախմատում Մալախովը 1,5-0,5 հաշվով հաղթեց ու մտավ հաջորդ փուլ:

Երկրորդ փուլի գլխավոր անակնկալը մատուցեց Եվրոպայի նախկին չեմպիոն, լեհ գրոսմայստեր Բարտլոմեյ Մաչեյան, որը 2 պարտիաներն էլ շահեց ադրբեջանցի Թեյմուր Ռաջաբովից: Բացի հայ գրոսմայստերներից, ուժեղագույն շախմատիստներից պայքարը շարունակում են նաեւ Վասիլի Իվանչուկը, Շահրիյար Մամեդյարովը, Ալեքսեյ Շիրովը, Պյոտր Սվիդլերը, Մայքլ Ադամսը, Ալեքսանդր Գրիշչուկը, Մագնուս Կառլսենը, Եվգենի Ալեքսեեւը, Գատա Կամսկին, Ռուսլան Պոնոմարյովը:

Ներկայացնում ենք 2-րդ փուլի արդյունքները. Գալկին-Իվանչուկ՝ 1,5-2,5, Մամեդյարով-Կոժուլ՝ 1,5,-0,5, Շուլման-Շիրով՝ 0,5-1,5, Սվիդլեր-Պավասովիչ՝ 2-0, Գուտեփլ-Ադամս՝ 0,5-1,5, Ալեքսեեւ-Սակաեւ՝ 1,5-0,5, Նայեր-Գրիշչուկ՝ 0,5-1,5, Կառլսեն-Նայդիչ՝ 3-1, Ավրուկ-Կամսկի՝ 0,5-1,5, Բելով-Յակովենկո՝ 0,5-1,5, Պոնոմարյով-Վանգ՝ 2,5-1,5, Հուե-Տիվյակով՝ 2,5-1,5, Բարտ-Ռոյզ՝ 1,5-0,5, Ջիանգ-Կարյակին՝ 0,5-1,5, Տոմաշեւսկի-Հուաեյն՝ 1,5-0,5, Ալմաշի-Սոսկո՝ 2-0, Բարամիձե-Դոմինգուես՝ 0,5-1,5, վան Վելի-Բարեեւ՝ 0,5-1,5, Ֆրեսինետ-Նեւեդնիչնի՝ 1,5-0,5, Օնիշչուկ-Նիկոլիչ՝ 1,5-0,5, Ջհաո-Նիսիպեանու՝ 1,5-2,5:

Նալբանդյանը նաեւ ավտոմրցարշավորդ է

Սովորաբար մարզիկները բացի իրենց հիմնական զբաղմունքից, մարզական այլ հետաքրքրություններ էլ ունեն: Օրինակ՝ իսպանացի թենիսիստ Ռաֆայել Նադալը ֆուտբոլ է խաղում՝ մարզվելով հորեղբոր, անցյալում հայտնի ֆուտբոլիստ Միգել Անխել Նադալի մոտ: Իսկ ահա Մադրիդի մրցաշարի հաղթող, արգենտինահայ Դավիթ Նալբանդյանը ավտոմրցարշավների մեծ սիրահար է եւ ի զարմանս շատերի, նույնիսկ դրանցից մի քանիսին մասնակցում է:

Վերջերս թենիսիստների դասակարգման ցուցակում 9-րդ տեղը զբաղեցնող Դավիթ Նալբանդյանն ընկերոջ՝ պրոֆեսիոնալ ավտոմրցարշավորդ Մարկոս Լիգատոյի հետ մասնակցել է Արգենտինայում մեծ հեղինակություն վայելող մրցումներին: Այդ մրցումներին սովորաբար մասնակցում են հարյուրավոր ավտոսիրողներ 1920-1981-ին արտադրված մեքենաներով:

Դահուկորդները որակազրկվեցին

Դահուկային սպորտի միջազգային ֆեդերացիայի հակադոպինգային կոմիտեն հրապարակել է որոշում ավստրիացի դահուկորդներ Ռոլանդ Դիտհարդի, Յոհաննես Էդերի, Մարտին Տաուբերի եւ Յուրգեն Պինտերի վերաբերյալ, որոնք անցած տարի Թուրինում կայացած ձմեռային օլիմպիական խաղերում խախտել էին հակադոպինգային կանոնները:

Հիշեցնենք, որ նրանց մոտ օլիմպիական խաղերի ժամանակ հայտնաբերվել էին ներարկիչներ եւ արյան փոխներարկման համար անհրաժեշտ սարքավորումներ: 2006-ի ապրիլին ՄՕԿ-ը չեղյալ էր համարել չորս դահուկորդների արդյունքները եւ նրանց ցմահ որակազրկել էր:

Անցկացված մանրակրկիտ հետազոտությունների արդյունքում դահուկային սպորտի միջազգային ֆեդերացիայի հակադոպինգային կոմիտեն արդարացրել է Յուրգեն Պինտերին, իսկ ահա մյուս երեք դահուկորդներին որակազրկել է մինչեւ 2009-ի նոյեմբերի 21-ը: Օլիմպիական խաղերում նրանց ցույց տված արդյունքները չեղյալ են համարվել, ուստի նվաճած մեդալները մարզիկները պետք է հետ վերադարձնեն:

Վիտալի Կլիչկոն սպասում է մրցակցին

WBC-ի ղեկավարությունը պատվավոր չեմպիոն Վիտալի Կլիչկոյին հաստատել է որպես մրցակից Սեմյուել Պիտեր-Օլեգ Մասկաեւ մենամարտի հաղթողի համար: Վերջիններս 2008-ի փետրվարի 2-ին ԱՄՆ-ում կվիճարկեն WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ընդ որում, Կլիչկոն համաձայնության է եկել WBC-ի ղեկավարության հետ, որ եթե մինչեւ մենամարտի սկիզբը նշված մրցակիցներից որեւէ մեկը վնասվածքի պատճառով չկարողանա ռինգ դուրս գալ, ապա ինքը պատրաստ է նրան փոխարինել եւ փետրվարի 2-ին մենամարտել: Իսկ եթե այդ մենամարտը կայանա, ապա Կլիչկոն հաղթողի հետ կմենամարտի 2008-ի գարնանը:

«Տորոնտո» ամենաթանկ ակումբն է

Ամերիկյան «Ֆորբս» հանդեսի տվյալներով, հոկեյի ազգային լիգայի առաջնության մասնակից «Տորոնտո» աշխարհի ամենաթանկ հոկեյի ակումբն է: Անցած տարվա համեմատ ակումբի գինն աճել է 24 տոկոսով եւ հասել է 413 մլն դոլարի: Երկրորդ տեղում «Ռեյնջերսն» է՝ 365 մլն դոլար: Իսկ ահա Սթենլիի գավաթակիր «Անահայմը» այդ ցուցակում միայն 12-րդն է՝ 197 մլն դոլար:

Աղահովագրական գումարը ռեկորդային է

110 մ արգելավազքի աշխարհի ռեկորդակիր, չին վազորդ Լյու Սյանն ապահովագրել է իր մարմինը 13 մլն դոլարով: Այս գումարը ռեկորդային է չինացի մարզիկների համար: Ապահովագրական գործակալությունը հրաժարվել էր վազորդից գումար ստանալ՝ առաջարկելով նրան դառնալ ֆիրմայի «դեսպանը»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հետքերով

Թեղուտի հանքավայրի շահագործման օգուտ-վնասի ոչ եզակի անտոուղ քննարկում

Թեղուտի հարցի քննարկման հերթական հեղինակը Քաղաքացիական ազգային նախաձեռնությունն էր: Քննարկման նպատակը, գոնե մամլո հաղորդագրությունում զետեղվածի համաձայն, Թեղուտի հանքավայրի շահագործումը բնապահպանական աղեհ, թե տնտեսության զարգացում դիտարկելու հիմքերի պարզաբանումն էր: Այս անգամ էլ պարզաբանումը հանգիստ խղճով կարելի է գնահատել չհաջողված, չնայած ներկա էին թե՛ բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների, թե՛ հանքավայրի շահագործման նախապատրաստական աշխատանքներն իրագործող «Արմենիքն ֆափըր փրոդաքշն» ընկերության ներկայացուցիչները: Կանաչների միության նախագահ **Հակոբ Սանասարյանը** Թեղուտի հանքավայրի շահագործման բնապահպանական հետեւանքները ներկայացրեց, իսկ Լեռնամետալուրգիայի ինստիտուտի շրջակա միջավայրի պաշտպանության բաժնի պետ **Հովհաննես Նիկողոսյանը**՝ Թեղուտի աշխատանքային նախագծի տնտեսական եւ բնապահպանական կողմերը: Երկուսթ ասելիքում նորություն չկար: Բնապահպանների գնահատականով՝ Թեղուտի շահագործումը բնապահպանական աղեհ է. «Թեղուտի շահագործումը բնական համակարգ է սպանելու», վստահեցրեց Հակոբ Սանասարյանը: «Արմենիքն ֆափըր փրոդաքշն» ընկերության գնահատականով՝ լեռնահանքային արդյունաբերությունը բնապահպանական լիակատար անվտանգություն չի կարող ապահովել. «Հարկավոր է համատեղ ջանքերով Թեղուտի հանքավայրի շահագործման վնասները հասցնել նվազագույնի: Հասարակական կազմակերպություններից ակնկալում ենք համապատասխան առաջարկություններ», տեղեկացրեց Հովհաննես Նիկողոսյանը:

Մինչդեռ բնապահպաններից Հակոբ Սանասարյանը համոզված է. «Թեղուտի հանքավայրի շահագործման նախագիծն անհնար է մեղմել»: Ինչուն ավելի քաղաքական, քան տնտեսական կամ բնապահպանական ուղղվածության է: Կա կառավարության համապատասխան որոշում, որը քաղաքական է եւ չունի իրավական հիմք: Սա էլ Հակոբ Սանասարյանի գնահատականն է: «Արմենիքն ֆափըր փրոդաքշն» ընկերությունը ճիշտ հակառակ կարծիքին է: Այսպես դիմահայաց դիրքից էլ շարունակվեց քննարկումը, հրապարակվեցին տվյալներ, որոնց մի մասը վաղուց հայտնի է: Իսկ տվյալները հետեւյալն են... Թեղուտի հանքավայրի շահագործման ընթացքում՝ 40-50 տարում հատվելու է 357 հա անտառ (127 հազար ծառ), ընդհանուր ջրահավաք ավազանը կրճատվելու է 4.73 տոկոսով, տարեկան շահույթը միայն արտահանումից կազմելու է մոտ 130 մլն դոլար, տարեկան հարկերն էլ կազմելու են 3.2 մլրդ դրամ, աշխատատեղերը շինարարության փուլում լինելու են 1700-ը, ապա 1400-ը: Այնուհետեւ ի պատասխան տնտեսագիտության դոկտոր, ԱԺ նախկին պատգամավոր **Թաթուլ Մանասերյանի** հարցի, «Վալլեխ խումբ» ընկերությունների աշխատակազմի ղեկավար **Սահակ Կարապետյանը** տեղեկացրեց. «105 մարդ հրաժարվում է օտարել իր հողերը, սակայն կառավարության նոյեմբերի 1-ի որոշմամբ այդ տարածքները համարվում են հանրային գերակա շահ եւ համապատասխանաբար կօտարվեն Թեղուտի շահագործումն իրականացնելիք ընկերությանը՝ շուկայական գներին համապատասխան»: Այնուհետեւ Սահակ Կարապետյանը վստահեցրեց, որ ո՛չ օտարման հանգամանքը, ո՛չ էլ Թեղուտի հանքավայրի շահագործման հետագա ընթացքը որեւէ կերպ չեն նպաստի բնակչության արտահոսքի եւ ԽՍՀՄ փլուզումից հետո 250-300 ամայացած գյուղերի թվի ավելացմանը, այլ, համաձայն հաշվարկների, տեղի է ունենալու ճիշտ հակառակը՝ աճելու է Թեղուտի եւ Շնողի բնակչության թիվը աշխատատեղերի շնորհիվ:

Հակոբ Սանասարյանի վստահեցմամբ «Արմենիքն ֆափըր փրոդաքշն» ընկերության հաշվարկներում առկա են անճշտություններ, որոնք փորձացնում են վնասի չափը. «Իրենց իսկ կազմած նախագծում տեսքի եւ աղյուսակների տվյալները միմյանց չեն համապատասխանում: Օրինակ՝ գրված է, որ հատվելու է 53 հազար խնձորենի, իսկ աղյուսակում բնափայտի թիվը զրո է»:

Ի վերջո քննարկման ավարտին դժգոհությունն ու քննարկման նպատակի հստակեցման ցանկությունը երկուսթ էր՝ բնապահպանները շարունակեցին պնդել Թեղուտի հանքավայրի շահագործման վնասակարությունը, «Արմենիքն ֆափըր փրոդաքշն» ընկերության պնդումն էլ բնապահպանների հետ համագործակցության մասին էր այս անգամ եւս: Դեռեւս 2001-ին է մրցութային կարգով «Արմենիքն ֆափըր փրոդաքշն» ընկերությունը 25 տարի ժամկետով ստացել հանքավայրի շահագործման արտոնագիրը, արդեն կա 2006-ին ներկայացված Թեղուտի շահագործման աշխատանքային ծրագիրն տրված ՀՀ կառավարության դրական եզրակացությունը եւ ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ի որոշումը, որից ըստ էության բխում է Հայաստանում մետաղի ամենամեծ պաշար ունեցող Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման սկիզբը: Նախատեսվում է տարեկան արդյունահանել 25-30 հազար տոննա պղինձ, 800 տոննա մոլիբդեն:

Որոշումը կայացված է եւ շահագործման հարցում շահագրգռված ընկերության ներկայացուցիչների հետ վիճել ծրագրի իրականացման շուրջ առնվազն միամտություն է, ու թե քննարկումը բնապահպաններ-ընկերություն ձեւաչափով է, ապա թերեւս բնապահպանական վնասի նվազեցման ուղղությամբ պետք է ընթանա, այլապես անպտուղ է եւ, ցավոք, հերթական աղացույց բնապահպանների եւ Թեղուտի հանքավայրի շահագործումը անթույլատրելի համարողների անհամերաշխության, հետեւաբար եւ անհեռատեսության: Քննարկումների ուղղությունը չփոխելու դեպքում հարկավոր կլինի ձեւաչափը փոխել, ինչի մատդրությունը գոնե երեկ նկատելի չէր:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն

«ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»

Ամենամսյա սեմինարներ

«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն՝ Մ. Բաղրամյան 24դ, 54-24-81, 54-74-81

ՕՐԱԳԻՐ ՀԱՄԱՐ ՅԱԵՎԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ասեղյան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 29.11.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2:

ՄԱՆՈՒՅՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ - ՄԲԾՋԲ - 07/45» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար իրավաբանական տերմինաբանության զարգացման ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Արդիբինվեստբանկ» «Բեջգալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Ավանեսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ն:

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԾՋԲ-07/46» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար բնակարանների ձեռքբերման ծառայությունների մատուցման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արդիբինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ-ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Ի.Քոչարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10.00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԾՋԲ-07/56» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ Տավուշի մարզպետարանի կարիքների համար «Մարդկանց իրազեկությունը բարձրացնող ՀԿ-ների դերի ակտիվացման» ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Արդիբինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ 247230066158 Հ/Հ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Ի.Քոչարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի, լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ին:

Հարգելի ընթերցողներ

Սկսվել է ՀՅ Դաշնակցության պատմնաթերթ «Դրոշակի» 2008 թվականի բաժանորդագրությունը:

Բաժանորդագրության գինն է՝

մեկ տարվա համար՝ 6000 դրամ

վեց ամսվա համար՝ 3000 դրամ:

Բաժանորդագրվել ցանկացողները կարող են դիմել ինչպես «Հայփոստ» ՊՓԲԸ, Երեւան, Սարյան 22, հեռ.՝ 51-45-46, 51-45-47, այնպես էլ «Դրոշակի» խմբագրատուն՝ Երեւան, Մհեր Մկրտչյան 12/1, հեռ.՝ 52-18-76:

Լույս է տեսել Արմեն Մալխասյանի *«20 000 Տաղանդ Ծոփքի համար»* պատմավեպը, որտեղ ներկայացված է Ք. Ա. առաջին դարում Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները: Գրքում նկարագրված է Մեծ Հայքի թագավոր Արտավազդ Երկրորդի ժամանակաշրջանը:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 29.11.2007 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	304.54
EUR	1	ԵՎՐՈ	449.11
RUR	1	Ռուս. ռուբլի	12.50
GEL	1	Վրաց. լարի	187.87

www.azg.am
www.azgdaily.com
www.azgdaily.eu